

24 165 a 13210

✓

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԲԱՆՎՈՐ.
ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀ. ԲԱԺՆԻ

ԳՅՈՒՂԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ

A 11/11



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1929

Հրատ. № 1123

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրատ. № 5866(բ)

Տիրաժ 800

Պատ. № 1184

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԳՅՈՒՂԻ ՊԱՏԳԱՄԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԺՐԱԳՐԻ ՏԵՎ. ԱԹԻՆ-
ՏՈՆՔԻ ՊԼԱՆՆԵՐԻ ՁԱՐԳ:

Ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցման ներկա շրջանում կուսակցութիւնը հաստատուն հենակետ պետք է ունենա գլուղում հան-
ձինս գեղջկուհիների պատգամավորական ժողովի. Շի-
նարարութեան հնգամյա պլանի առաջադրած մեծ խն-
դիրների իրականացումը պահանջում է լարել մեր
չիրկրի աշխատավորութեան բոլոր ուժերն ու միջոց-
ները:

Կուսակցութիւնն արդեն ընդհուպ մոտեցել է
մանր ապրանքարտադրողների փոշիացած անհատա-
կան տնտեսութիւններն աստիճանաբար խոշոր հա-
սարակաշնացված տնտեսութեան ունիւնների վրա փոխա-
դրելու խնդրին: Վիթխարի խորհրդային տնտեսու-
թիւնների շինարարութիւնը և գյուղատնտեսութեան
կուլտիւրիվացման ու արտադրական կոոպերացման ծա-
վալումը կուսակցութեան ներկա շրջանի գյուղական
քաղաքականութեան հիմնական խնդիրներն են հանդի-
սանում: Ավելի բարձր մի աստիճանի չե հասնում
բանվոր դասակարգի և գյուղացիութեան չքավորա-
միջակային հիմնական մասսաների զոդումը, ավելի ու
ավելի մեծ մի դեր է սկսում խաղալ այնտեղ գյուղի
և քաղաքի արտադրական միաձուլութիւնը:

Ահա այս խնդիրները իրականացման նշանաբա-
նով և, վոր պիտի ընթանա պատգամավորական ժողովի

ամբողջ աշխատանքը: Պատգամավորական ժողովները պետք է վոտքի հանեն գեղջկուհիներին, խորհրդալին և կոլեկտիվ տնտեսությունների աշխատավորուհիներին լայն մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը և լծեն նրանց ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի իրագործման աշխատանքներին:

Մեր լերկրի տեխնիկական ու կուլտուրական հետաքննարկությունը և միջ բանվորական պետության ուղակավորումն անխուսափելիորեն մի ամբողջ շարք դժվարություններ են հարուցում սոցիալիստական շինարարության ուղիների վրա: Դրա հետ միասին՝ սոցիալիստական հարաճուն գրոհն առաջ է բերում լժպին մի դիմադրություն կապիտալիստական տարրերի կողմից, վորոնց նա հետզհետե դուրս է վտարում ժողովրդական տնտեսությունից: Մոլեգնել և կուլակը: Իր նպատակների համար նա ձգնում է սգտագործել գեղջկուհիների հետաքննարկ մասսաները: Կամ այդ մասսաները կռուռնան սոցիալիզմի ալտիվ կառուցողներ և կամ հնի համար մարտնչող կույր գործիքներ կլինեն կուլակների և տերտերների ձեռքում: Պատգամավորական ժողովների նպատակն է՝ ստեղծել գեղջկուհիներից իրական հեղափոխական մի ուժ, վորն ընդունակ լինի դեմ կանգնել հակախորհրդալին տարրերի բոլոր մեքենավորություններին և ալտիվ կերպով մասնակցել գլուղի սոցիալիստական վերակազմության աշխատանքներին: Այնինչ գեղջկուհիների պատգամավորական ժողովների գործունեյության անցյալ տարվա փորձը ցույց տվեց, վոր նրանք ամենուրեք կուսակցության հաստատուն ու հուսալի հենարանը հան-

դիսանալ չեն կարողացել: Մի շարք դեպքեր ապացուցում են այն հանգամանքը, վոր պեղջկուհիները վոչ միայն չեն աջակցել կուսակցութեանը նրա կարեւորագույն ձեռնարկումների կիրառման խնդրում, այլև յերեմն խանգարել են նրան (հացամթերման կամուսնիային և կոլտնտեսութեւնների կազմակերպմանն ընդդիմանալով): Այդ փաստերն ասում են, վոր պատգամավորական ժողովները դեռևս անբավարար չափով են ձևակերպում կանանց մասսայի հասարակական կարծիքը սոցիալիստական շինարարութեան խնդիրների շուրջ:

Այս թիրութեւնների հիմնական պատճառը պետք է փնտռել այն բանում, վոր պատգամավորական ժողովների աշխատանքը սխալ է դրված չեղել: Սակայն չեն չեղել դեպքերը, յերբ դեկավարը փակվել է աշխատանքի ծրագրային մասում և դրանով պատգամավորական ժողովը հասցրել քաղաքագիտութեան դպրոցի աստիճանին: Այդ պատճառով ել պատգամավորական ժողովները հաճախ կտրված են չեղել իրական կյանքից: Յերկրորդ պատճառն էլ այն է, վոր տեղական կուսակցական, կոոպերատիվ և այլ հասարակական կազմակերպութեւնները չեն կարողացել ըմբռնել այն կարևոր դերը, վորպիսին ունի պատգամավորական ժողովը իբրև հասարակական մի միավոր: Ամենից ավելի ցայտուն կերպով չեղևան են յեկել այս թիրութեւնները հացամթերման կամուսնիայի շրջանում, յերբ պատգամավորական ժողովը, փոխանակ պատգամավորուհիների ամբողջ ուժն ու կամքը ալդ կամպանիայի համար մոբիլիզացման լենթարկելու, փոխանակ կուսակցութեան ու խորհուրդների հասարա-

տուն հենարանը և հասարակական մի միավոր դառնալու, — զբաղվել և հերթական ծրագրային հարցերի մշակումով, մինչդեռ այդ հարցը հացամթերումների հետ ամենաչնչին իսկ առնչութիւն չի ունեցել, և այդպիսով հացամթերողները մոռացել են, վոր հանձին պատգամավորական ժողովների՝ իրենց և կուսակցութեան համար գլուղում ռզնականներ գոյութիւն ունեն։ Յեղել են նաև այնպիսի դեպքեր, յերբ պատգամավորական ժողովները հացամթերումների ժամանակ ամենեւին չեն ել աշխատել, քանի վոր նրանց ղեկավարները մօբիլիզացիայի լին լինթարկված յեղել հացամթերման կամպանիա անցկացնելու համար, և վոչ մի անգամ չեն հիշել, թե ինչպիսի դեր ու անելիքներ ունի պատգամավորական ժողովն այդ խնդրում։ Անցյալի այս թերութիւնները պետք է հաշվի առնուին և վերացվեն ներկա տարվա աշխատանքների ընթացքում։

Այս տարի վճռական բեկում պիտք է կատարել գեղջկուհիների պատգամավորական ժողովի գործնական աշխատանքների նշանակութիւնը խորացնելու խնդրում։ Ղեկավարը պետք է կազմակերպի գործնական ղեկուցումներ դնելու աշխատանքը և իրապես ղեկավարի պատգամավորական ժողովի ամբողջ գործունեութիւնը, և վոչ թե տեսական հարցերի շուրջ դասախոսութիւններ կարգա միայն։ Նա պետք է նաև մասնակցի գործնական ղեկուցումների առթիւ բանաձևեր մշակելու աշխատանքին, հետևաբար այդ ղեկուցումների ժամանակ նրա ներկայութիւնը պարտադիր է։

Ղեկավարը կին-կազմակերպչի հետ միասին պետք է հաշվի առնի, թե տեղական պայմաններում

տվյալ պատգամավորական ժողովի համար վորպիսի աշխատանքն եւ ավելի նպատակահարմար, և իրագործելի բանաձեւեր առաջարկի նրա նիստերում: Ղեկավարն իր ժամանակին պիտի կարողանա լարել պատգամավորների ուշադրությունը կուսակցության և խորհրդային իշխանության հերթական քաղաքականության կարևորագույն խնդիրների ուղղությամբ:

Պատգամավորուհիների համար խոշոր դաստիարակչական նշանակություն ունի ալն հանգամանքը, վոր նրանք տեսնում են իրենց աշխատանքի բավարար արդյունքները և հետևում են, թե ինչպես են կատարվում իրենց առաջարկները: Հնարավորության չափով պետք եւ յուրաքանչյուր բանաձևի համար կատարման ժամկետ նշանակել և ժողովի միջոցով հանձնարարել առանձին պատգամավորուհիների, վոր հսկեն նրանց կատարմանը և արդյունքների մասին հերթական նիստում հաղորդեն ժողովականներին իզիտություն:

Պատգամավորական ժողովն արագությամբ պիտի կարողանա ներգործել տվյալ գյուղի հասարակական կյանքին վերաբերող բոլոր հարցերի վրա: Հետևաբար ղեկավարը կարող եւ ըստ կարիքի փոխել թեմայի տեղը ծրագրում և մասնել այնպիսի չնախատեսված գրույցներ, վորոնք տվյալ դեպքում տվյալ գյուղի համար ունեն ակտուալ նշանակություն:

Այսպես, որինակ, ալս-ինչ տեղում կարող եւ լինել հացահատիկային կոոպերացիայի հարցը, ալս-ինչ տեղում՝ հակաէրոնական պրոպագանդայի հարցը և ալն: Այս տարի գեղջկուհիների ծրագրի թեմաները կրճատել ենք և հասցրել Ց-ի, վորպեսզի հնարավորություն տանք ղեկավարին ընթացիկ հրատապ խնդիրներ շուրջ ազատ նիստեր գումարել:

Առանձին ուժգնությամբ հանդես ե գալիս ներկայումս դասակարգային պայքարի սրումը հասցամթերումների գործում: Կուլակը ձգտում ե թագցնել հացի պաշարը ե ընդդիմանում ե հացամթերումներին: Պատգամավորական ժողովը կարող ե հասարակական հակադեցության մեթոդներով ստիպել, վոր կուլակը վաճառի իր հացը, նա կարող ե կազմակերպել գեղջկուհիներին հացը ժամանակին հանձնելու համար: Հետևաբար պատգամավորական ժողովում լիակատար կերպով և ուշադիր նախապատրաստությամբ պետք ե մշակման յենթարկել հացամթերումների հարցը:

Ծրագրում հացամթերումների թեման յերրորդ տեղն ե դրված: Դա, իհարկե, չի նշանակում, վոր ղեկավարը պետք ե սպասի մինչև յերրորդ ժողովը ե հացամթերման կամպանիայի ամենաչեռուն շրջանում ինչ-վոր բոլորովին կապ չունեցող թեմա անցնի: Հենց հացամթերման կամպանիայի ժամանակ ե, վոր պետք մշակել այս հարցը. ուստի ղեկավարը կարող ե թեմաները վերադասավորել ե հացամթերման վերաբերյալ թեման յերրորդ տեղից առաջին: տեղը փոխադրել: Դրանից բացի, մենք հանձնարարում ենք համապատասխան ռաշոններում հացամթերումների մասին հատուկ զրույց կազմակերպել:

Սոցիալիստական գրոհը ծնունդ ե տալիս կապիտալիստական տարրերի դիմադրության: Այս տարրերին նեցուկ են հանդիսանում նաև յեկեղեցականներն ու աղանդավորներն իրենց քնասարար գործունեյությամբ: Կրոնական-եկեցադային հին հախապաշարումները գեղջկուհուն դեռևս պինդ կերպով բռնել են իրենց ճանկերում: Նրա այդ տգիտությունից ոգար-

վում են տերտերներն ու կրոնավորները: Այդ ճակատի վրա պալքարելը պատգամավորական ժողովի ամենակարևոր անկիլքներից մեկն է հանդիսանում: Ուստի անհրաժեշտ է համառոտ ծանոթութլթյուններ տալ պատգամավորուհուն կրոնի ծագման և ժողովրդական տնտեսութլթյան վերակառուցման շրջանում նրա խաղացած կազմալուծիչ գերի մասին: Այդ նպատակով ել տալիս ենք հակակրոնական զրուլցի սխեմաներ: Ղեկավարը նախորոք պետք է փնտուի անաստվածների լլջիջում ալդ գործին համապատասխան և պատրաստված գեկուցողներ: Դրանից բացի, վատ չեը լինի, յեթե պատգամավորական ժողովին կից կազմակերպվեր անաստվածների լլջիջ, ալն հաշվով, վոր մի տարուց հետո նրա անդամները կարողանան մտնել միութլթյան ընդհանուը բլլիջը՝ արդեն նրա աշխատանքների համար բավականաչափ նախապատրաստված վիճակով:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԳՐՈՍԻՆԻՄՈՒՄԸ

Բերքատվութլթյան բարձրացման մասին առաջադրած խնդիրը կուսակցութլթյան, խորհուրդների և գլուղատնտեսական կոոպերացիալի կողմից տոկունութլուը և կորովի աշխատանք է պահանջում: Գեղլկուհիների պատգամավորական ժողովները պետք է լինեն ալն տկոթվը, վորի վրա կարողանա հենվել կուսակցութլուըը ընդատվութլթյան բարձրացման նպատակով դանադան ձեռնարկուլմները կիրառելիս: Պատգամավորուհիները լալն չափերով պետք է ներգրավեն գլուղում լերկրագործական ձեռնարկուլմներ կիրառելու աշխատանքներում: Նրանք լավ ծանոթ պետք է լինեն

Թե համամիութենական Կենտրոնականի «բերքատվող-
թյան բարձրացման միջոցների մասին» հանած վերո-
մանը և թե տվյալ ռայոնի համար նշված ագրոմի-
նիմումին: Ագրոմինիմումի մշակմանը հատուկ նիստեր
պետք է նվիրել: Այդ նիստում գյուղխորհրդի և հո-
ղային համայնքի նախագահը պետք է ղեկուցի ըն-
դունված ագրոմինիմումի և նրա կիրառման միջոցների
մասին: Պատգամավորուհիների վրա կարելի չե դնել
գյուղական ագրոնոմիական կատարածուների պար-
տականություններ և սերտորեն կապիլ խորհրդի գյու-
ղատնտեսական սեկցիայի անդամների հետ:

Այս գյուղական ագրոնոմիական կատարածու-
ները պետք է կենդանի հսկողութուն հաստատեն ա-
ռաջին հեթին ամենապարզ, պարտադիր կարգով մըտ-
ցըված ձեռնարկումների, որինակ՝ աշնանացան արտե-
րում անասուններին արածացնելն արգելելու, կոպար-
ները վերացնելու, գիթխոտի և ֆնասատուների դիմ
պայքարելու, սերմագտման և նման այսպես կոչված
«ագրոմինիմումային» ձեռնարկումների ու գյուղացիու-
թյան շահագրգռության առարկա կազմող այլ տիպի
ձեռնարկումների կիրառման աշխատանքների վրա:

Պատգամավորուհիներն ագրոգրագիտութուն պետք
է անցնեն: Դրա համար ավելի լավ կլինի գյուղատն-
տեսական խմբակների անդամ դարձնել նրանց: Լավ
կլինի նույնպես ագրոնոմիական պոպուլյար գրակա-
նության կոլլեկտիվ ընթերցանություններ կազմա-
կերպել:

Այս տարի բանգեղջրաժինները պատգամավորա-
կան ժողովների համար տկնառու պիտույքներ (գիա-
ղըմներ, սխեմաներ, դիագնոզիտիֆներ) պետք է մա-

տակարարին: Մենք այս տարի ղեկավարների համար «մատերիալներ» չենք հրատարակում: Անցյալ տարվա մատերիալների մեծ մասը դեռևս չի հնացել, և ղեկավարը նրանցից կարող և ոգտվել: Դրանից բացի ղեկավարն իր ձեռքի տակ պետք և ունենա X\V կուսկոնֆերանսի և խորհուրդների V համագումարի վորոշումները ժողովրդականացնող նոր գրականութուն, ինչպես նաև վերահասու լինի միասնական գլուղաաւնտեսական հարկի նոր որենքին և Կենտգործկոմի՝ բերքաւոլության բարձրացման վերաբերյալ դիրեկտիվին: Այստեղ մենք վետեղել ենք մասսայական գրականության մի ցուցակ պատգամավորուհու համար և ղեկավարներին հաճնարարում ենք միաժամանակ գործադրել նաև կոլլեկտիվ ընթերցանության մեթոդը:

Պատգամավորական ժողովների՝ հասարակականարտադրական աշխատանքի կարևորագույն միթողներից մեկը համարելով սոցիալիստական մրցութունը, մենք հանձնարարում ենք լայն չափերով կիրառել այն պատգամավորական ժողովների միջև:

Սոցիալիստական մրցութունը պետք և լինի հզոր մի միջոց պատգամավորուհիներին գլուղի սոցիալիստական շինարարության խնդիրների շուրջ մոբիլիզացման յենթարկելու համար:

Մեկ պատգամավորական ժողովը կարող և մյուսի հետ մրցության մասնել հացամթերումների, բերքաւոլության բարձրացման, ցանքսատարածության ընդլայնման, գեղջկուհիներին կոլտնտեսութունների և կոոպերացիայի մեջ ներգրավելու, անգրապիտության վերացման, կուլտուր-կենցաղային հիմնարկներում աշխատելու և նման այլ տիպի աշխատանքներում ալտիվ մասնակցութուն բերելու հարցերի շուրջ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՎ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՅԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

Կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունները, վարպես խոշոր սոցիալիստական տնտեսության արդեն իսկ դործող ձևեր, մեծ նշանակություն են ստանում դյուղացիության չքավորական և միջակային նորանոր խավերը կոլլեկտիվացման մեջ ներգրավելու տեսակետից: Կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունները, վարպես զոդման նոր ձևեր, պրոլետարական ազդեցության ուղեցուցներն են հանդիսանում գյուղում: Ներանք հաստատուն հենակետեր պիտի դառնան գյուղատնտեսության կոլլեկտիվացման և ագրոնոմիական ազդեցության տարածման դործում, ինչպես նաև կոդմակերպին դյուղացիությունը կուլակի վրա գրոհ տալու համար:

Կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունները գյուղի քաղաքական ու սմբողջ աշխատանքի հենակետերը պիտի դառնան:

Հետևաբար պատգամավորական ժողովները, վարպես կուսակցության՝ կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունների մեջ կատարելիք աշխատանքի մի մասը, պետք է իրենց առաջ նպատակ դնեն մոբիլիզացիայի յենթարկել կոլլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների և գյուղատնտեսական աշխատավորուհիների ակտիվությունը գյուղատնտեսության սոցիալիստական վերակազմության դործի համար:

Պատգամավորական ժողովները, ոգտվելով խորհրդային, կոլլեկտիվ ու անհատական տնտեսու-

թյուններն աշխատավորուհիներին խոշոր հասարակական գյուղատնտեսության շինարարության դերն ու ինքիւնները գիտակցելու խնդրում, պետք է դարձնեն նրանց ակտիվությանը և ցույց տան սեփական արտադրության զարգացման, աշխատանքի ճիշտ կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման ոժանդակելու ուղիները: Դա խոշոր տնտեսության ոգտավետության լավագույն ապացույցը կլինի:

Պատգամավորական ժողովները խորհրդային ու կոլլեկտիվ տնտեսությունների աշխատակիցներից պետք է դաստիարակեն այնպիսի մի առաջավոր հասարակական ակտիվ, վորն ընդունակ լինի հանդես գալ իրրե դեղջկուհիների չքավորական ու միջակային լայն մասսաների կազմակերպիչ ու առաջնորդ և լծի նրանց գյուղատնտեսության սոցիալիստական վերակազմության աշխատանքներին: Պատգամավորական ժողովները պետք է նախապատրաստեն այս աշխատավորուհիներին՝ նրանց վարչական մարմիններում և խորհրդային ու հասարակական աշխատանքներում առաջ քաշելու համար:

Պատգամավորական ժողովների՝ խորհրդային ու կոլլեկտիվ տնտեսությունների մեջ կատարելիք աշխատանքի մի ուրիշ կողմն է հանդիսանում այդ տնտեսությունների աշխատավորուհիների կուլտուր-կենցաղային աշխատանքը բարվոքելու և ինքնագործունեյությանը զարկ տալու խնդիրը, նրանց իսկապես գյուղի կուլտուր-կենցաղային վերակազմության ուղիցուցները դարձնելու նկատառումով:

Յեւ վերջապես պատգամավորական ժողովի՝ կուլ-

լեկտիվ ու խորհրդային տնտեսությունների մեջ կատարելիք աշխատանքի կարևորագույն խնդիրներից մեկն էլ այս տնտեսությունների աշխատավորուհիներից կուսակցության համար պահեստի կադրեր նախապատրաստելն է:

Համ Կ(Բ)Կ՝ կոլլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների մեջ պատգամավորական ժողովներ կադմակերպելու մասին 1929 թ. 20/Ն-ին հանած վորոշման հիման վրա յե, վոր մշակել ենք այս ժողովածվում զետեղված համապատասխան պլանները:

Բանվորուհիների և գեղջկուհիների պատգամավորական ժողովների աշխատանքն այնպես է կառուցված, վոր ծրագրային հարցից հետո լսվում է գործնական զեկուցում: Ներկա պլաններում ճիշտ հաշվառված ենք վարվել. պատգամավորուհիները նախ լսում են մեկ-յերկու գործնական զեկուցում իրենց մոտիկ խնդիրների մասին, ապա միայն ղեկավարն ընդհանրացումներ անելով մոտենում է ծրագրային հարցին, այն՝ լուսաբանում նախկին գործնական զեկուցումներից բերված որինականերով և այդպիսով իրար կապում տեսական և գործնական հարցերը:

Պլաններում նշված ութ թեմաներն, իհարկե, կպահանջեն վոչ թե 8—9 նիստ, ալ թերևս 15—18, այսինքն յուրաքանչյուր թեմային 2—3 նիստ 2—3 շաբաթվա ընթացքում: Չպետք է վախենալ, թե այդքան յերկար ժամանակամիջոցում պատգամավորուհիների ուշադրությունը կցրվի, վորովհետև չպետք է մոռանալ այն հանգամանքը, վոր գործնական խնդիրների մասին լսված զեկուցումներն ավելի հեշտ ու ավելի հստակ կերպով կապավորվեն ունկնդիրների ուղիղում, քան վերացական տեսական զեկուցումները:

1. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գործնական խնդիրները մասին զեկուցողները պետք է իմանան, թե վորն է տեսական զեկուցման թեման, ծանոթանան նրա հետ և իրենց զեկուցումը կապեն նրա հանգուցային հարցերին:

Իբրև որինակ վերցնենք կոլտնտեսություն աշխատավորուհիների պատգամավորական ժողովի առաջին թեման—«Տվյալ ուսյոնի գյուղատնտեսությունը և կոլտնտեսությունը»:

Ուշադրությունը կարգացնեք այս թեմայի մշակումը (ղեկավարի յեզրափակման զրույցը) և դիտեցեք գյուղատնտեսի գործնական զեկուցման սխեման: Սխեման կազմված է այն հանգուցային հարցերի շուրջ, վորոնք կան նաև յեզրափակման զրույցում, միայն թե հարմարեցրած տվյալ կոլտնտեսությանը: Դրա համար ել ղեկավարը յեզրափակման զրույցին տնցնելիս՝ սկսում է տվյալ ուսյոնի կամ գյուղի գյուղատնտեսության զրույցի վերաբերյալ հարցերից, այսինքն՝ ունկնդիրներին ծանոթ, կոնկրետ հարցերից:

Յուրաքանչյուր գործնական զեկուցող հենց այս կերպ պիտի կազմի իր զեկուցման սխեման: Ուստի վոչ միայն ցանկալի, այլև անհրաժեշտ է, վոր ղեկավարը ներկա լինի գործնական զեկուցումներին, իսկ գործնական մասի զեկուցողն իր զեկուցման ծրագիրը կազմի ղեկավարի, այսինքն՝ տեսական մասի զեկուցողի հետ միասին:

2. ՊԱՏԳԱՄԱԼՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ Մ Ա Ս Ի Ն

Յուրաքանչյուր թեմայի մշակումը պետք է բաղկացած լինի յերեք մասից.

Յուաջից մաս. — Գործնական զեկուցում և վիճաբանութիւններ նրա շուրջ: Յուրաքանչյուր զեկուցում կարող է տեւել մի ամբողջ ժողով, այսինքն $1-1\frac{1}{2}$ ժամ: Յեթե զեկուցումները մեծ չեն, ապա կարելի յէ մի ժողովում յերկուսը լսել և վիճաբանութիւններ բաց անել յերկուսի շուրջ միաժամանակ:

Յերկուրդ մաս. — Գործնական զեկուցումը լսելուց հետո առաջարկներ (բանաձև) են դուրս բերվում. բանաձևի կազմութիւնը պետք է մասնակցեն թե պատգամավորուհիները և թե զեկուցողը: Առաջարկներ ընդունելուց հետո պետք է ընտրել մի հանձնաժողով՝ նրանք կիրառելու համար: Կարելի լի հետո սյդ հանձնաժողովները բաժանել յենթահանձնախմբերի, այն հաշվով, սակայն, վոր նրանցից յուրաքանչյուրում լինի 5—7 հոգուց վոչ ավելի: Յենթա հանձնախմբերը պիտի կազմվեն ժողովից անմիջապես հետո և զեկուցողի ու զեկավարի մասնակցութեամբ: Այս խմբերից յուրաքանչյուրին պետք է տալ պատգամաբորական ժողովում ընդունված բանաձևից այս կամ այն առաջադրութիւնը: Խումբն իրենցից մեկին նախագահ է ընտրելու և նրա զեկավարութեամբ կատարելու առաջադրութիւնը (որինակ՝ հետազոտութիւն, այս կամ այն հարցին ծանոթանալ, կուսակցութեան, խորհրդային իշխանութեան և պրոֆմիութիւնների վորոշումների կիրառումն ստուգել և այլն):

Պատգամավորական ժողովի յերրորդ մասը լինելու չե, առաջին՝ յենթահանձնախմբերի նախագահների ղեկուցումն աչն մասին, թե ինչ են կարողացել կատարել գործնական ղեկուցման առթիվ արված առաջարկներին, և յերկրորդ՝ ղեկավարի ընդհանրացնող ղեկուցումը (յեզրավական զրույցը)։


Դրանով ել վերջանում և յուրաքանչյուր թեմայի մշակումը։

3. ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՄԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Պատգամավորուհիների պարտականությունների մեջ և մտնում վոչ միայն պատգամավորական ժողովի բանաձևից աչս կամ աչն տաղադրությունների կատարումը, այլև նրանց կենսագործման վերահսկողութիւնը։ Դրա համար ել յուրաքանչյուր խմբի նախագահ մնում և իրրե «վերահսկիչ»։ Նա պարբերաբար պետք և ղեկուցի պատգամավորական ժողովին կամ ղեկավարին իր վերահսկողության արդյունքների մասին։

Այսպիսով պատգամավորական ժողովի լողունդը պետք և լինի հետևյալը.— «վոչ մի անկատար վորոշում», ալետեղից ել այս յեզրակացութիւնը—գործնական ղեկուցումների առթիվ ընդունված առաջարկները (բանաձևը) խիստ գործնական բնույթ պետք և ունենան։

Այս աշխատանքից բացի, յուրաքանչյուր պատգամավորուհի պետք և կցվի (ըստ իր ցանկության) խորհրդին, կոոպերատիվին, խրճիթ-ընթերցարանին, ճաշարանին, կոլտնտեսության վարչության,



արտադրական խորհրդակցության, տեղեկամական հանձնախմբերին և այլն *):

Կցված պատգամավորուհիներն իրենց աշխատանքի մասին պարբերաբար հաշվետվություն պիտի ներկայացնեն պատգամավորական ժողովին, նրանից ալսկամ այն ցուցմունքը, իսկ հարկ չեղած դեպքում նաև հետագա աշխատանքի համար աջակցություն ստանալով: Իրրև կանոն, անհրաժեշտ և պատգամավորուհիներին լծել գիրք տարածելու աշխատանքին: Կարելի լի հատկապես կազմակերպել գիրք տարածողներին բրկգաղնիք և ուղարկել գլուղներ:

4. ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Անցյալ տարիներին փորձն արդեն ցույց և տվել, վոր ղեկավարը հաճախ սոսկ դասախոս և դառնում և ըստ ծրագրի իր տեսական ղեկուցումը կարգալուց հետո ալկա ամենևին չի հետաքրքրվում գործնական ղեկուցումներով, առանց նույնիսկ մտածելու, վոր գործնական ղեկուցումներն ըստ եյության լրացուցիչ դեր են խաղում իր թեմայի համար, դարձնում են այն կենսական ու հեշտ յուրացնելի: Դա վոչ մի դեպքում թուլլատրելի չե, մանավանդ յերբ պատգամավորական ժողովը պետք և տարվի գործնական ղեկուցումների հիման վրա կառուցված պլանով: Ղեկավարն անպայման պետք և ծանոթանա պատգամավորական ժողովների մասին կենտրոնական

*) Կոլլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների աշխատավորուհիների պատգամավորական ժողովին կից սեկցիաներ կարելի լի չկազմակերպել:

մարմնի մշակած կանոններին, տալա նաև առաջադրված պլանին:

Նա գործնական մասի ղեկուցողին մանրամասն ծանոթություն պետք է տա իր տեսական ղեկուցման հանգուցային հարցերի մասին և մատնանշի, թե ինչպիսի մոմենտներ պետք է ընդգծի: Իրրև կանոն, նա անպայման պետք է ներկա լինի վերջինս ղեկուցումներին:

Նա կարող է վիճաբանություններին մասնակցել. վորպեսզի թույլ չտա պատգամավորուհիներին հեռանալ գործնական ղեկուցման թեմայից, և այն ոգտագործի իր չեղրափակման զրուցում:

Ղեկավարը պետք է նույնպես ծանոթանա պատգամավորական ժողովի համար անհրաժեշտ ակնառու պիտույքների և գրականության հետ: Նախքան չեղրափակման զրուցին անցնելը, նա աչքի զարկող տեղում պետք է կախ տա իր ղեկուցման լրացուցիչ սխեմաներ և դիագրամներ, վորպեսզի պատգամավորուհիները նախապես ծանոթանան նրանց:

Յեթե կոլեկտիվ ու խորհրդային տնտեսություններին հաջողվի ծրագրային կինոֆիլմեր բերել, ապա դա կարելի լի ցուցադրել ղեկուցման վերջում, կցելով նրան ղեկավարի կարճ բացատրությունները, վորոնք մեկ անգամ ևս կհիշեցնեն ավյալ թեմայի հանգուցային հարցերը:

5. ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես պետք է ընթանա գեղջկուհիների, կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների աշխատա-

վորուհիներին պատգամավորական ժողովներն անցկացնելու նախապատրաստական աշխատանքը:

Ամենից առաջ կին-կազմակերպիչը պետք է ծանոթանա պլանին և նայի, թե իրենց պայմաններում այդ պլանը կարճո՞ղ և արդո՞ք լրիվ կիրառվել, թե՞ կրճատումներ են հարկավոր: Մենք կարծում ենք, վոր ծրագրի՝ որինակի համար 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ թեմաներն անպայման պետք է մշակման լենթարկվեն, իսկ ինչ վերաբերում է 1-ին և 4-րդ թեմաներին, ապա դրանք կարելի չե կարճ կերպով մտցնել մյուս թեմաների, որինակ՝ 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ թեմաների մեջ: Թեմաների մշակման նշված կարգը կարելի չե փոփոխության յինթարկել. ըսյց և աչնպես վերադասավորություն կատարելիս պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, թե նրանք ի՞նչպիսի կապ և առնչություն ունեն տվյալ գյուղի, կոլլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների համար տվյալ դեպքում կարևոր հանդիսացող հարցերի հետ:

Առաջին յերեք թեմաներն իրար կապված են, ուստի չի կտրելի գյուղատնտեսական աշխատանքին հարցերի մշակումը վերջացնելիս՝ արդյունաբերության վերաբերյալ զրույցը հետաձգել գարնան: Դա ինքնըստինքյան հասկանալի չե անշուշտ, իսկ ինչ վերաբերում է այն ինդերին, թե այս յերեք թեմաներից վորը պետք է դնել առաջ, ապա դա աչնքան ել կարևոր չե:

Աշնանը, իհարկե, ավելի նպատակահարմար է սկսել «Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը» թեմայից, վորովհետև այդ ժամանակ թե՞ հացամթերումների յեռուն աշխատանքների, թե՞ տվյալ

տարվա բերքատվության բարձրացման աշխատանքներն արդյունքների ամփոփման, թե՛ գյուղին ձմեռվա սեզոնի համար անհրաժեշտ արդյունաբերական ապրանքներ մատակարարելու և այլ նման աշխատանքների շրջանն է:

Այնուհետև կին-կազմակերպիչը պետք է քննության յենթարկի պատգամավորական ժողովի պլանը կամ իրենց բջիջում և կամ թե՛ շրջկոմում, վորպեսզի դրանով կուսկազմակերպությունը դրած լինի տվյալ պլանի իրագործմանն ոժանդակելու անհրաժեշտության տալ:

ԳԵՂՋԿՈՒՀԻՆՆԵՐԻ ՊԵՏԳԱՄԵՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԺՐԱԳԻՐ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ԺՈՂՈՎ

Գործնական հարց Գյուղատնտեսությունը բեր-
բայությունը բարձրացումը

1. Տվյալ գյուղի, ուսյոնի գյուղատնտեսության վիճակը, գյուղատնտեսական ձևերի հետամնացությունը, գյուղատնտեսությունից փոքր ապրանքայնությունը և հասութարերությունը, բերքատվության բարձրացման կոնկրետ հնարավորությունները, խոշոր հասարակացված տնտեսության և բարելավված յեղանակների անցնելու պրոցեսը, ցանքատարածությունը ընդարձակումը:

2. ԽՍՀՄ գյուղատնտեսություն հետամնացությունը: Այդ հետամնացության պատճառները:

3. Կենտրոնից դիրեկտիվը առաջին հնգամյակում բերքատվությունը 35% ով բարձրացնելու և

ցանքսատարածութիւնը 22⁰/₀-ով ընդարձակելու մասին: Ագրոմիւնիստների կիրառումը: Գյուղի չքավորական-միջակային մասսաների տնտեսական շահագրգռութեան զարգացումը. (միասնական գյուղատնտեսական հարկի նոր որոնքը, գների քաղաքականութիւնը և այլն): Լայն մասսաների ներգրավումը բերքատվութեան բարձրացման հնգամյա պլանի իրագործման հիմնական պայմանն է (սոցիալիստական մրցութեան մեթոդը, արտադրական խորհրդակցութիւնները և այլն):

Պատգամավորական ժողովի դերը բերքատվութեան բարձրացման հնգամյա պլանի իրագործման և այդ գործում գեղջկուհիների լայն մասսաներ ներգրավելու խնդրում:

Գործնական հարց. Գյուղատնտեսի զեկուցումը

Ձեկուցման սխեման

Գյուղատնտեսի զեկուցման կառուցվածքը սկսւք ե հարմարեցրած լինի տեղական պայմաններին և մատնանշի այն կոնկրետ ագրոտեխնիկական ձեռնարկումները, վորոնք կարող են ոժանդակել տվյալ գյուղի գյուղատնտեսութեան բերքատվութեան բարձրացմանը, կապելով այդ ցուցմունքները տվյալ ռայոնի տնտեսական տիպին (հացահատիկային, անասնաբուծական և այլն) և նրա համար ագրոմիւնիստներին:

Բերքատվութեան բարձրացման միջոցների մեջ առաջնակարգ տեղ են բռնում հողաշինարարութիւնը, հողին հանգստութիւն տալը, տեղական պայմանների համապատասխանութեամբ կուլտուրաներ մտցնելը, աշնանացան արտերում անասունների արածեցումը դադարեցնելը և այլն):

Բերքատվության բարձրացման գործում լուրջ նշանակութիւն ունի սերմազտումը և տեսակավորումը. նա բերքատվութիւնը բարձրացնում է 10—15 տոկոսով:

Գյուղատնտեսը պետք է սովորեցնի զեղջկուհուն դա գործնականում կիրառելու ձևերը:

Գյուղատնտեսութիւնը ամեն տարի ավելի քան մեկ միլիարդի ֆնաս ե կրում գյուղատնտեսութիւն ֆնասատունների շնորհիվ. պետք է պատգամավորուհուն ցույց տալ նրանց դեմ կռիւն միջոցները:

Գյուղատնտեսը պետք է ցույց տա, թե ինչքան է ավելանում տնտեսութիւն հասուցիւթը այս կամ այն ագրոտեխնիկական միջոցը կիրառելիս, և թե ինչպիսի աշակցութիւն կարող է հանդես բերել պատգամավորուհին գլուղում նման միջոցներ կիրառելու ասպարիզում: Այստեղ պետք է ցույց տալ նաև, թե ինչպիսի կոնկրետ յեղանակներ կան զեղջկուհուն տվյալ ռալոնի ագրոմիւնումումի կատարման աշխատանքներին լծելու համար: Գյուղատնտեսի զեկուցման մեջ պետք է շոշափվեն նաև հետևյալ հարցերը.

1. Դաշտաբուծութիւն և անասնաբուծութիւն հիմնական տեսակների շուրջ կանանց միջև մրցութիւն ստեղծելու խնդիրը:

2. Գյուղատնտեսական ֆնասատունների, կորդ թողնված հողերում անասուններին արածացնելու և նման ֆնասաբեր յերևույթների դեմ կռիւն համար կանանց մասնակցութիւն արտակարգ լեռնակներ կազմակերպելու խնդիրը:

3. Դաշտաբուծական և անասնաբուծական փորձեր դնելու և կիրառելու գործում կանանց ևս մաս-

նակից դարձնելու խնդիրը (անասուններին նորմալով
կերակրելը, նրանց տեղերը տաքացնելը, ձագերին
ճիշտ խնամելը և այլն):

4. Գեղջկուհիների ներգրավումը տվյալ ռալո-
նում զանազան տեսակի կուլեկտիվներ կազմակերպե-
լու գործում (կաթնատնտեսական ընկերութուն, հո-
ղի հավաքական մշակման կուլեկտիվներ, մեքենային
և մեխիորատիվ ընկերութուններ):

5. Կանանց մասնակցութունը դաշտաբուծական
և անասնաբուծական նվաճումներն արտահայտող
գյուղատնտեսական ցուցահանդեսներում:

6. Կանանց ներգրավումը գյուղատնտեսական
կարճատև ու յերկարատև կուրսերում:

7. Գյուղատնտեսական կուլտ-հիմնարկներում,
կուլեկտիվ ու խորհրդային տնտեսութուններում և
գյուղատնտեսական փորձնական կայաններում հքս-
կուրսիաներ կազմակերպելու և անկացնելու խնդիրը:

Այս ղեկուցման փոխարեն, նախած տեղական
պայմաններին, կարելի չե ղենել նաև գուղխորհրդի
տնտեսական սեկցիայի ղեկուցումը բերքատվության
բարձրացման ուղղությամբ ձեռք առնված միջոցների
մասին կամ պատգամավորուհու ղեկուցումն այն մա-
սին, թե նա ինչպիսի նոր մեթոդներ և կիրառում իր
տնտեսության մեջ:

Ցանկալի չե բերքատվության բարձրացման հար-
ցերի շուրջ պատգամավորական ժողովների միջև սո-
ցիալիստական մրցութուն կազմակերպել, իսկ ուր
հնարավոր ե՛ նաև հքսկուրսիա անցկացնել ղեպի աչս
կամ այն կուլտուրական տնտեսութունը:

ՇԵՐԿԱՐՈՐԴ ԺՈՂՈՎ

Միագրային հարց. Գյուղատնտեսությունը սոցիալիստական վերակազմավորումը

1. Մանր տնտեսությունը դարգացման սահմանափակ հնարավորությունները: Ոոչոր հասարակայնացված տնտեսության կազմակերպումը վորպես գյուղատնտեսության ծայրաստիճան հետափնացությունը հաղթահարելու և նրան սոցիալիստական ճանապարհի վրա դուրս բերելու վճռական մեթոդ: Կուլակությունը գլխավորությունը գյուղի սոցիալիստական վերակազմություն և գյուղացիական ստորին խավերի իրական բարձրացման գործին:

Գյուղատնտեսությունը հասարակայնացված հատվածի աճումն ըստ հնգամյա պլանի:

2. Կոոպերացման տարրեր աստիճանները—վաճառահանման ասպարիզում կազմված խմբավորումից դեպի արտադրական խմբավորումը: Ոոչոր արտադրություն ոգուտները: Կոլտնտեսությունը վորպես գյուղացիական տնտեսությունների համախմբման ամենարարձր ձևը: Կոլտնտեսությունների աճումը և նրանց ադդեցությունը շրջակա գյուղացիության վրա:

3. Սորհրդային տնտեսությունների՝ իբրև գյուղատնտեսության սոցիալիստական ձևերի՝ շինարարություն անհրաժեշտությունը: Ի՞նչպիսի դեր են խաղում խորհրդային տնտեսությունները վորպես խոշոր հացահատիկային ֆաբրիկաներ ու կենտրոններ չքավորական ու միջակային անհատական տնտեսություններին բազմակողմանի աջակցություն ցույց տալու խնդրում:

4. Մեքենա-տրակտորային կայանները և տրակտորային կալոնները, նրանց դերն անհատական տնտեսությունների արտադրության հասարակայնացման գործում: Կոլտնտեսությունները, խորհրդային տնտեսությունները և մեքենա-տրակտորային կայանները վորպես պրոլետարիատի և գյուղացիության հիմնական մասսաների զորման նոր ձևեր: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը վորպես պրոլետարիատի և գյուղի չքավորական-միջակային խավերի կողմից կուլակության դեմ մղվող պայքարի հիմունք: Գեղջկուհիների պատգամավորական ժողովի դերը գյուղատնտեսության կոլեկտիվացման գործում:

Գործնական հարց. Կոլտնտեսության վարչության գեկուցումը

Ձեկուցման սխեման

1. Խնչպիսի տիպի լե տվյալ կոլտնտեսությունը:
2. Խնչ չափով ոգտավետ ե կոլխոզային տնտեսությունը անհատականի համեմատությամբ:
3. Խնչ չափով են ներգրավված կոլտնտեսությունների մեջ ինքնուրույն տնտեսություն վարող ընտանիքների անդամներն ու գեղջկուհիները:
4. Խնչպես ե ոգտագործվում կանանց աշխատանքը տվյալ կոլտնտեսության մեջ:
5. Խնչպիսին ե կոլտնտեսության աշխատավորուհիների նյութական կացությունը նույն տնտեսության անդամների արական մասի կացության համեմատությամբ (աշխատավարձը):
6. Խնչ չափով ե հասարակայնացված կենցաղը

կոլտնտեսութեան մեջ (ընդհանուր ճաշարաններ, մանկական հիմնարկներ)։

7. Գեղջկուհիների մասնակցութիւնը կոլտնտեսութեան վարչական և վերահսկիչ մարմիններում։

8. Կանանց աշխատանքի պաշտպանութիւնը կոլտնտեսութեան մեջ։

9. Խնչպիսի առավելութիւններ ունի կոլտնտեսութիւնը անհատական տնտեսութեան համեմատութեամբ՝ գեղջկուհիների կենցաղի բարելավման իմաստով (նախադպրոցական և դպրոցական յերիւսաների դաստիարակման դործում)։

10. Կոլտնտեսութեան նշանակութիւնը տվյալ դուրի համար. կոլտնտեսութիւնը վորպես ազրոնումիական ձեռնարկումների աղբյուր։

11. Պատգամավորական ժողովի կապը կոլտնտեսութեան հետ։

Այս զեկուցման փոխարեն կարելի չե դնել նաև խորհրդային տնտեսութեան, տրակտորային կալանի և ցանքսային ընկերութեան զեկուցումներից մեկնումներ։

Ծանկալի յե եքսկուրսիա կազմակերպել դեպի կոլտնտեսութիւնը, խորհրդային տնտեսութիւնը կամ տրակտորային կայանը, նայած թե նրանցից վորը գոյութիւն ունի տվյալ շրջանի մերձակայքում,

ՅԵՐՐՈՐԴ ԺՈՂՈՎ

Շրագրայիճ հարց. Պրդյուճաբերութիւնը յեվ գյուղաճճեսութիւնը

1. Յերկրի ինդուստրիացումը կուսակցութեան և խորհրդային իշխանութեան գլխավոր գիծն և։ Ար-

դյունաբերության դերը գյուղատնտեսության տեխնիկական և սոցիալիստական վերակազմության խնդրում ըստ հնգամյա պլանի: Գյուղատնտեսության ինդուստրիացումը: Յերկրի ինդուստրիացման հարցերի անդրադարձությունը հնգամյա պլանում:

2. Մեր հումուկթային ու պարենավորման դժվարությունների աղբյուրն է հանդիսանում այն հանգամանքը, վոր գյուղատնտեսությունը չափազանց յետ է մնում արդյունաբերության տեմպից: Այս հետամնացության աստիճանական վերացման պատկերն ըստ հնգամյա պլանի: Կոնտրակտացիոն սիստեմի լայն պրակտիկան ըստ հնգամյա պլանի: Խնչպիսի նշանակություն ունի կոնտրակտացիան վորպես քաղաքի ու գյուղի զոդման նոր ձև և չքավորա-միջակային տնտեսությունների արտադրողականության բարձրացման յեղանակ: Բանվոր դասակարգի ղեկավար դերի ամրացումը գյուղացիության հիմնական մասսաների հետ զոդվելու նոր ձևերի դարգացման հիմունքով:

3. Մասսաներին շինարարության դործին լծելու մեթոդը և վերակառուցման խնդիրների իրադործումը՝ գյուղում և քաղաքի ու գյուղի միջև սոցիալիստական մրցութուն անցկացնելու ճանապարհով: Պատգամավորուհիներին լայն չափերով այդ մրցության մեջ ներգրավելու անհրաժեշտությունը:

4. Հացամթերումների նշանակությունը քաղաքի և գյուղատնտեսական սպառող ռալոնների հացի դրժվարությունները վերացնելու խնդրում: Խնչո՞ւ չեանհրաժեշտ ժամանակին կատարել հացամթերումների պլանը: Կուլալություն ընդդիմությունը հացամթեր-

ման կամ պանիային: Ինչո՞ւ չե անհրաժեշտ դուրսացի-
ների և գեղջկուհիների ինքնագործունեյությունը
ներդրավել հացամթերումներին աջակցելու գործում, և
ի՞նչպիսի դեր ունի այնտեղ պատգամավորուհին:

**Գործնական հարց. Կոօպերացիայի մերկայացուցչի
կամ խորհրդի նախագահի զեկուցումը հացա-
մթերումների ընթացքի մասին**

Զեկուցման սխեման

1. Տվյալ ուսյոնի հացամթերումների պլանը, կա-
տարման քանակն ու ժամկետը:
2. Ի՞նչպիսի հացամթերողներ են աշխատում
ուսյոնում. նրանց փոխհարաբերությունները:
3. Հացի հանձնումն ըստ դուրսացիական խմբե-
րի—չքավորների, միջակների, կուլակների: Ի՞նչքան
եր մոտավորապես յենթադրվում և ի՞նչքան ե հանձն-
ված:
4. Յեթե հացամթերումների պլանը չի կատար-
ված, ապա ինչո՞ւ և ինչի՞ համար:
5. Ի՞նչպես ե անցել ինքնահարկումը:
6. Ի՞նչպիսի միջոցներ են ձեռք առնվել հացա-
մթերումներին ու ինքնահարկմանը ղեմադրություն
ցույց ավել կուլակների և նրանց արբանյակների
հանդեպ:
7. Ի՞նչպիսի նախադատրաստական աշխատանք
ե կատարվել չքավորության խմբերի կազմակերպման
ու միջակին հացամթերումների աջակցության մեջ
ներդրավելու գործում, և ի՞նչ ե յենթադրվում անել
աչդ տեսակետից:
8. Յեկող տարվա հացամթերումների պլանը:

9. Ի՞նչպիսի մասնակցութիւնն պետք է բերեն պատգամավորուհիները հացամթերման աշխատանքներում:

Կարելի յե դնել կոոպերացիայի ներկայացուցչի զեկուցումը պետական արդյունաբերության համար հոմ նյութեր մթերելու մասին:

Զեկուցման սխեման

1. Ի՞նչպիսի հոմ նյութ է հայթայթում տվյալ ռայոնը պետական արդյունաբերության համար:

2. Ի՞նչպիսի յեղանակով է մթերված հոմ նյութը:

3. Կոնտրակտացիայի նշանակութիւնը դյուղատնտեսության և պետական կարիքների ապահովման համար:

4. Կիրառվում է արդյոք կոնտրակտացիայի մեթոդը տվյալ ռայոնում և ի՞նչպիսի արդյունքներ է տալիս:

5. Ի՞նչպիսի արտոնութիւններ և ոժանդակութիւն է ցույց տալիս պետութիւնը տեխնիկական հոմ նյութ արտադրողներին:

6. Ի՞նչպիսի ձեռնարկումներ են կիրառվում տվյալ ռայոնում կոոպերացիայի միջոցով տեխնիկական մշակութիւնները զարգացնելու դործում:

7. Ի՞նչպես կարող է պատգամավորուհին ոժանդակել տվյալ ռայոնում տեխնիկական մշակութիւնները զարգացնելու դործին:

Կարելի չէ նույնպէս մի ղեկուցում դնել կոն-
ստիտուցիայի մասին, ապա նաև շեֆընկերության և
բանվորական բրիգադայի ղեկուցումները:

ԶՈՐՐՈՐԴ ԺՈՂՈՎ

**Ծրագրային հարց. Կոոպերացիայի մեամակութիւնը
գյուղատնտեսութեան համար**

1. Գյուղատնտեսական կոոպերացիայի տեսակ-
ները և նրանց նշանակութիւնը սովյալ ռայոնի հա-
մար: Գեղջկուհու դերը գյուղատնտեսական կոոպերա-
ցիայի զանազան տեսակներում: Կոոպերացիան—մաս-
նավորապէս արտադրական կոոպերացիան և կոլլեկ-
տիվացումը—սոցիալիզմի ուղիներն են: Լենինի կոոպե-
րատիվ պլանը: Գյուղատնտեսական կոոպերացիայի
զարգացումը հնգամյա պլանում: Գյուղացիութեան
75 տոկոսը գյուղկոոպերացիայի ցանցում ընդգրկելու
խնդիրն ըստ հնգամյա պլանի: Կոոպերացիան վոր-
պէս կուլակի դեմ գրոհելու և չքավորական ու միջա-
կային տնտեսութիւնները բարձրացնելու հիմնա-
կան ձև:

2. Սպառողական կոոպերացիայի նշանակութիւն-
ը մասնավոր առևտրականի և կուլակի դեմ մղելիք
պայքարում: Սպառկոոպերացիայի դերը գյուղին ար-
դունաբերական ապրանքներ մատակարարելու և
դնբրի իջեցման մեջ: Կոոպերացիայի դերը գեղջկու-
հիների կենցաղային աղատագրման ասպարիզում:
Գյուղի ապրանքաշրջանառութիւնը սպառկոոպերա-
ցիայի ցանցում ընդգրկելու չափն ըստ հնգամյա
պլանի:

3. Գեղջկուհիների չքավորական-միջակային մաս-

սայի մասնակցութիւնը կոռուբորացիայում: Կոռուբորատիվ ակտիվը: Կոռուբորացիայի անդամների վերահսկողութիւնը կոռուբորատիվ մարմինների աշխատանքների վրա: Գեղջկուհիների և մասնավորապէս պատգամավորուհիների մասնակցութիւնն ու դերն այս վերահսկողութեան մեջ: Կոռուբորացիայի սեփական միջոցները: Փայակուտակումը: Պատգամավորական ժողովի անելիքները գեղջկուհիների ամբողջ հիմնական մասսան կոռուբորացման յենթարկելու խնդրում:

Գործնական հարց. Գյուղացեցեական վարկային ընկերության գեկուցումը

Զեկուցման սխեման

1. Քանի՞ տնտեսութիւն և միավորում գյուղատնտեսական վարկային ընկերութիւնը:
2. Ինչո՞ւ և արտահայտվում վարկային ընկերութեան կողմից չքավորութեանը ցուց տրվող ոժանդակութիւնը:
3. Վարկային ընկերութեան դերը գյուղի կուլիկտիվացման մեջ:
4. Պատգամավորական ժողովի կապը վարկային ընկերութիւնների հետ:
5. Ի՞նչպիսի առավելութիւններ և ընձեռում վարկային ընկերութիւնը կը տնտեսութիւններին՝ միանձնյա գյուղացիական տնտեսութիւնների համեմատութեամբ:

Կարելի չէ նույնպէս դնել սղառողական ընկերութեան և մեքենային ընկերութեան գեկուցումը դիֆֆերենցիալ փայլ կիրառման կամ չքավորութեան կոռ-

պերացման ֆոնդի ոգտագործման մասին (հատկապես տնտեսութեան գլուխ կանգնած չքավորուհիներին ու ժանդակելու մասին):

ԼԻՆԳՆԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ

Մրագրային հարց. Խորհրդային ԽՍՀՄ-ում

1. Գյուղխորհուրդը խորհրդային իշխանութեան ստորին մարմինն է գյուղում: Խորհուրդը և հողային համայնքները: Չքավորական ու միջակային տնտեսութեան քարձրացման և կուլակութեան դեմ պայքարելու ուղղութեամբ խորհրդային իշխանութեան կողմից կիրառվող միջոցները: Գեղջկուհու իրավունքների պաշտպանութեան որևէքը:

2. Խորհրդային իշխանութունը վորպես բանվորների և չքավոր գյուղացիութեան դաշինքը գյուղացիութեան միջակ մասսաների հետ՝ բանվոր դասակարգի ղեկավարութեամբ: Ի՞նչ է սովորեցրել Լենինը բանվորների և գյուղացիների դաշինքի մասին: Խորհրդային իշխանութունը պրոլետարիատի ղեկավարութեան ձևն է: Ուղեքնն հն ոգտվում ընտրական իրավունքից և ուղեքն՝ վոչ: Դասակարգային պայքարի սրումը գյուղում և կուլակային ու հակախորհրդային տարրերը յետ մղելու նպատակով չքավորներին, ապրակներին ու միջակ գյուղացիներին խորհուրդների շուրջը համախմբելու խնդիրները:

3. Խորհուրդների կազմակերպչական կառուցվածքը: ԽՍՀ Միութունը զանազան ազգութիւնների իշխատավորների կամավոր միավորութիւնն է: ԽՍՀ Մողովորդների լիակատար իրավահավասարութեան բաղանապումը կուսակցութեան և խորհրդային իշ-

խանության ազգային քաղաքականության ամենագլխավոր սկզբունքն է:

4. խորհուրդների աշխուժացման քաղաքականությունը և պայքար բյուրոկրատիզմի դեմ: խորհուրդների աշխատանքի թերությունների շուրջ տարվող լայն ինքնաքննադատությունը վորպես այդ աշխատանքի կարևորագույն մեթոդներից մեկը: Իրենց աշխատանքի հետ գլուխ չհանող և դասակարգային գիծը խեղաթյուրող պատգամավորներին ժամկետից առաջ լեռ կանչելու իրավունքը:

խորհրդային ապարատի զտումը ալլասերված տարրերից: Պատգամավորուհիների և ակտիվիստ գեղջկուհիների (չքավոր, բատրակ ու միջակ գեղջկուհիների) առաջադրումը խորհուրդների աշխատանքների մեջ:

5. խորհրդային Միությունը կապիտալիստական ողակավորման մեջ: ՍՍՀՄ պաշտպանությունը և գեղջկուհու դերն ախտեղ: Պաշը-Ավիաքիմ և Կարմիր խաչի ընկերությունը:

Գործնական հարց. Գյուղխորհրդի զեկուցումը գյուղի ճեմեսական յեվ կուլտուրական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ կատարած աշխատանքների մասին

Զեկուցման սխեման

1. Ի՞նչ է արել գյուղխորհուրդը գյուղատնտեսության բարելավման, հողաշինարարության անցկացման, կոլլեկտիվ կերպով բազմադաշտյան սխտեմին անցնելու, խոտաբուծություն մտցնելու, փորձնական-ցուցադրական հողամասերի կազմակերպման,

մարգագետինների բարելավման, սերմանման կամպայնիաներ անցկացնելու և այլ ասպարիզներում:

2. Ի՞նչ ե արել գյուղխորհուրդը չքավորներին և բատրակներին տնտեսական ոժանդակություն ցույց տալու խնդրում:

3. Հողի վարձակալության և բանվորական ուժի վարձման քանի՞ դեպք կա արձանագրված: Ի՞նչ ե արել գյուղխորհուրդը հողի թագուն վարձակալության դեմ կռիվելու և բոլոր բատրակներին լիովին կուլայմանագրերով ընդգրկելու խնդիրներում:

4. Ի՞նչ ե արել գյուղխորհուրդը կառավարական որենքները և իշխանության տեղական մարմինների (գավգործկոմի, շրջգործկոմի) վորոշումներն ազգաբնակչությանը բացատրելու խնդրում:

5. Ի՞նչ ե արել գյուղխորհուրդը գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացման խնդրում:

6. Նկատվում են արդյոք խուլիգանության, հարբեցողության և կենցաղային ալյանդակության դեպքեր, և ի՞նչ ե արել գյուղխորհուրդը նրանք արմատախիլ անելու համար:

7. Ի՞նչ ե արել գյուղխորհուրդը գյուղը բարեկարգելու համար (կամուրջների, ճանապարհների և ջրհորների վերանորոգումներ, հրդեհաշեջ խմբերի կազմակերպում):

8. Ի՞նչ աշխատանքներ ե կատարել գյուղխորհուրդը դպրոցական շինարարության ասպարիզում, ի՞նչ փշոցների յե ձեռնարկել չքավորների ու բատրակների լերիխաներին դպրոցներում ներգրավելու և ուսումնն ավարտելու համար աջակցություն ցույց տալու ուղղությամբ:

9. Կամ արդյոք գյուղխորհրդում կուտուր-կեն-
ցադալին սեկցիա և ինչպես ե նա աշխատում:

10. Ի՞նչ ե արել գյուղխորհուրդը պատգամավո-
րուհիներին խորհրդի սեկցիոն աշխատանքներին
լծելու և հասարակական-քաղաքական կամալանիաներ
անցկացնելու ասպարեզներում:

Կարելի յե դնել նույնպես խորհրդին կցված
պատգամավորուհիներին, չքավորական խմբերի և գյուղ-
խորհրդի առանձին հանձնախմբերի (հողային, ԲԿՏ
և այլն) զեկուցումներից մեկնումները:

ՎԵՏԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ

Մրագրային հարց. Ի՞նչպես ե գոյացում բյուջեն

1. Վերտեղից են միջոցներ ձեռք բերում գյուղ-
խորհուրդն ու շրջգործկոմը տեղական կարիքները
բավարարելու համար: Տեղական բյուջեն. ինչպես ե
նա գոյանում: Հարկերը և վոչ-հարկային յեկամուտ-
ները: Ո՞վ ե այսոր գյուղում հարկ վճարում և ով եր
վճարում հարկերի հիմնական մասը ցարիզմի որոք:

2. Գյուղատնտեսական միասնարկի նոր որենքը:
Գյուղատնտեսական միասնարկը վորպես կուլակի վրա
դրոհ տալու գործիք:

3. Ինչո՞վ ե նոր հարկը տարբերվում հնից: Ձքա-
վորության հարկի վերացումը և միջակների հարկի
թեթևացումը:

4. Վերտեղից ե միջոցներ ձեռք բերում խորհրդ-
դալին իշխանութիւնը և ինչի՞ վրա յե ծախսում արդ
միջոցները: Ինչի՞ վրա չեր ծախսում ցարական կա-
ռավարությունն իր միջոցները: Ըստ պետական բյու-

Ղեկի ինչքան զուժար և ծախսվում. գյուղատնտեսու-
թյան վրա: Գյուղատնտեսական միասնարկի տեսակա-
րար կշիռը պետական բյուջեում: Պատգամավորա-
կան ժողովը ինչպես պետք և գեղջկուհիներին մաս-
նակից դարձնի տեղական բյուջեն կազմելու և գոր-
ծադրելու աշխատանքներին:

5. Ազգաբնակչության խնայողները պետական
փոխառությունների միջոցով խնայողական գանձարկղ-
ներում հավաքելու խնդիրը: Խնչպիսի ոգուտ և տա-
լիս ազգաբնակչությանը խնայողական գանձարկղնե-
րում և պետական փոխառություններում գումարներ
պահ տալը: Խնայողական գանձարկղներում դրված
գումարները և պետական փոխառությունները լրա-
ցուցիչ միջոցներ կհաշվաթյան պետութւանը՝ գյուղա-
տնտեսության սպասարկող արդյունաբերությունը
զարգացնելու (մեքենաշինություն, տրակտորաշինու-
թյուն, հանքային պարարտացումներ և այլն), ինչպես
նաև գյուղատնտեսության բարձրացման համար կի-
րառվող ձեռնարկումներն անմիջաբար ֆինանսավորե-
լու համար:

Պատգամավորուհու դերը պետական փոխառու-
թյունների և խնայողական գանձարկղների համար
ազիտացիա մղելու գործում:

7. Խնճհարկումը և նրա նշանակությունը
գյուղի տնտեսական և կուլտուրական զարգացման
գործում: Պատգամավորական ժողովները և պատգա-
մավորուհիները ակտիվ մասնակցություն պետք և բե-
րեն ինճհարկման անցկացմուն և նրանից ստաց-
ված միջոցներն ոգտագործելու հարցերի քննարկման
գործում:

**Գործնական հարց. Հարկային հանձնաժողովի գե-
կուցումը հարկահավաքման քննարկի մասին**

Ջեկուցման սխեման

1. Խնչքան պետք է հարկ հավաքվեր տվյալ գյուղից:

2. Խնչքան է հավաքված:

3. Խնչպես է կատարվել հարկահավաքությունը (հարկատուների ցուցակներ կազմելը, նրանց տնտեսությունների հասցեներում վորոշելը, հարկերը հաշվելը): Գյուղատնտեսական միասնարկի մասին հրատարակված որենքի և հրահանգի վրա հիմնվելով՝ բերել գյուղացիների հարկման և հասցեներում վորոշման վերաբերյալ միջանի որինակներ:

4. Խնչպիսի և քանի՞ տնտեսություն են ազատվել հարկից տվյալ գյուղում:

5. Քանի՞ տնտեսություն են հարկային արտոնություններ ստացել և ի՞նչպիսի:

6. Խնչպես կարող է ոժանդակել պատգամավորուն հարկերի ճիշտ գանձման գործին:

Սրա փոխարեն կարելի չէ դնել բյուջետային հանձնաժողովի ղեկուցումն այն մասին, թե վորտեղ և ի՞նչպես են ծախսվել տեղական միջոցները, և կամ գյուղխորհրդի ղեկուցումը ինքնահարկումից ստացված միջոցների ծախսման մասին:

ՇՈՒԾԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ

Ծրագրային հարց. Պայմար հանուն կուլտուրական գյուղի

1. Գյուղական բնակչության կուլտուրական հետաքննարկությունը վորպես ամենալուրջ խոչընդոտը գյուղի ողջիակիսական վերակազմության ճանապարհ-

հին: Գյուղի և հատկապես գեղջկուհիների գրագիտութ-
յան ցած մակարդակը: Գյուղական բնակչության
կուլտուրական խոշոր հետամնացության պատճառները:
Գյուղական բնակչության ընդհանուր գրագիտության
բարձրացումը հիմնական զենքն և հանուն տնտեսու-
թյան նոր ձևերի և գյուղական նոր կենցաղի դասա-
կարգային թշնամու դեմ կռիվը համար:

2. Ընդհանուր ուսում մուծելու պլանը: Զբաղոր-
ների և բատրակների յերեխաներին, հատկապես աղջիկ-
ներին նախնական տիպի դպրոցները ներգրավելու
առաջիկա խնդիրները և մինչև ավարտելը դպրոցում
պահելու ուղղությամբ ձեռք առնվելիք միջոցները:
Զբաղորների և բատրակների յերեխաներին յոթնա-
մյա, իննամյա և գյուղյերիտ դպրոցները, տեխնի-
կոմները և բարձրագույն ուսումնական հիմնարկները
ներգրավելու խնդիրները:

3. Գյուղական ազգաբնակչության և հատկապես
գեղջկուհիների անգրագիտության վերացումը: Ակտի-
վիստ գեղջկուհիների, պատգամավորուհիների և բատ-
րակուհիների առաջին հերթի ուսուցումը վորպես
հիմնական խնդիր: Ուսուցման նպատակով բատրակ,
զբաղոր և միջակ գեղջկուհիներին զանազան ուսում-
նական հիմնարկներ ուղարկելը: Գեղջկուհու արտա-
բերական գրագիտության բարձրացման անհրաժեշ-
տությունը:

4. Թերթ, գիրք, կինո և ռադիո մեծ ու փոքրին
սլանդակող խմիչքի փոխարեն: Գեղջկուհիներին բան-
վուղթով թակիցների շարժման մեջ ներգրավելու
անհրաժեշտությունը:

5. Մասսաների ինքնագործունեություն կազմա-

կերպման նշանակութիւնը կուտուրալի և նոր կեն-
ցադի համար մղվող պայքարում: Գեղջկուհիների մաս-
նակցութիւնը խորհուրդների կուտուր-կենցաղալին
սեկցիաների աշխատանքներում, խրճիթ-ընթերցարան-
ների, դպրոցների և դպրոցների աջակցութեան խոր-
հուրդներում, ծնողական ժողովներում և այլն: Կուտու-
րաշալը վորպես կուտուրական շինարարութեան բնա-
գավառի մասսայական աշխատանքի ձևերից մեկը:

Ի՞նչ դեր պիտք է խաղա պատգամավորուհին
հանուն կուտուրական գյուղի մղվող պայքարում:

**Գործնական հարց. Խրճիթ-ընթերցարանի վար-
չի գեկուցումը**

Զեկուցման նախագիծը

1. Ի՞նչպես է խրճիթ-ընթերցարանն աջակցում
կուսակցութեանն ու խորհրդային իշխանութեանը
գյուղում հիմնական քաղաքական խնդիրները կիրառե-
լու դործում:

2. Ի՞նչ է անում խրճիթ-ընթերցարանը գյուղի
սոցիալիստական վերակազմութեանն աջակցելու, ազրո-
մինիմումն իրագործելու, բերքատուութիւնը բարձրաց-
նելու և այլ խնդիրներում:

3. Ի՞նչ չափով է հարմարեցրած խրճիթ-ընթեր-
ցարանի աշխատանքը չքավոր ու միջակ գեղջկուհու
շահերի ու կարիքների սպասարկմանը, և ի՞նչպես է
խրճիթ-ընթերցարանը ներգրավում նրանց իր աշ-
խատանքների մեջ: Քանի՞ գեղջկուհի յետ հաճախում
խրճիթ-ընթերցարանը:

4. Ի՞նչպես է տեղեկատու բյուրոն սպասարկում
գյուղացիներին:

5. Ի՞նչպիսի խմբակներ կան խրճիթ-ընթերցա-
րանին կից և ի՞նչպես են նրանք աշխատում:

6. Քանի՞ գեղջկուհի յե ներգրավված խմբակների
և կարմիր անկյունների աշխատանքներում:

7. Խրճիթ-ընթերցարանն ունի՞ արդյոք պատի
լրագիր, և նրան մասնակցում են արդյոք պատգա-
մավորուհիները:

8. Կի՞ արդյոք գեղջկուհի մոր անկյուն:

9. Ի՞նչպես կարող ե պատգամավորուհին ոժան-
դակել խրճիթ-ընթերցարանի աշխատանքին:

Այս գեղուցման փոխարեն կարելի յե դնել դյուղ-
խորհրդի գեղուցումն այն մասին, թե ի՞նչ և արված
բատրակների և չքավորների դպրոցական-լեռնականների
ոժանդակութունն սույց տալու խնդրում, դպրոցական
խորհրդում աշխատող պատգամավորուհու գեղուցումը,
կարմիր խաչի ընկերության բջջի գեղուցումը
գեղջկուհիների մեջ կատարած աշխատանքի մասին,
անաստվածների բջջի գեղուցումը, լիկկայանի գեղու-
ցումը գեղջկուհիների անգրագիտության վերացման
մասին և այլն:

ՈՒԹԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ

Ծագրային հարց. Համ և (բ) և բանվոր գասա-

կարգի կուսակցությունն է

Զեկուցման սխեման

1. Բջջի ղեկավար դերը դյուղում:

2. Կուսակցության վերաբերմունքը գյուղի տար-
բեր խավերի հանդեպ (հենվում է չքավորների և
բատրակների վրա, դաշինք կապում միջակի հետ և

գրոհ տալիս կուլակի վրա): Ձքավորական խմբերն ու ժողովները և նրանց խնդիրները:

3. Կուսակցության սոցիալական կազմը: Պայ-
քար հանուն կուսակցության միասնականության:
Կուսակցության զտումը և բանվորների ու բատրակ-
ների ընդունելությունը:

4. Կարող եր արդյոք գյուղացիությունը առանց
բանվոր դասակարգի ոգնության ու ղեկավարության
հաղթել ցարին և կալվածատերերին: Ինչո՞ւ պրոլետա-
րիատին պիտի պատկանի ղեկավար դերը սոցիալիզմի
կառուցման համար պայքարելու խնդրում: Բանվորա-
գյուղացիական դաշինքն ապահովում է խորհրդային
յերկրի ուժն ու հզորությունը: Լենինի պատգամը
բանվորի և գյուղացու զոգման մասին:

Բանվոր դասակարգի ավանգարդ Համ Կ(բ) Կ
գյուղացիների դաշինքի ղեկավարն է:

5. Կոմյերիտմիությունը նոր գյուղի համար պայ-
քարող մարտիկն է թե տնտեսական և թե կուլտուրա-
կան ու կենցաղային տեսակետներից: Պատգամավորա-
կան ժողովը կոմյերիտմիության ոգնականն է գյուղի
վերակազմության ուղղությամբ նրա կողմից դրված
բոլոր ձեռնարկումների մեջ:

6. Պիոներական կազմակերպությունը դաստիարա-
կում է չերեխաների հասարակական ունակություն-
ները և պատրաստում աշխատավորների ավելի կուլ-
տուրական մի սերունդ: Պիոներն ընտանիքում և մե-
ծերի հասարակական աշխատանքում հանդես է գալիս
ոգնողի դերում: Պատգամավորական ժողովի կապը
պիոներական կազմակերպության հետ:

7. Պատգամավորական ժողովը կոմսո՞ւնիզմի

գործնական շկոլան ե հանդիսանում: Պատգամավորուհին գյուղի ակտիվն է, վոր աշակցում ե կուսակցութիւնը նրա աշխատանքներում:

**Գործնական հարց. Կի՞ն-կազմակերպչի գե-
կուցումը, կուսբջիջի կողմից գեղջկու-
հիների մեջ կառարված առիտ-
օգնե՞նք մասին**

Զեկուցման սխեման

1. Բջջի կապը պատգամավորական ժողովի հետ:

2. Խնչպես ե կատարվում աշխատանքի բաշխումը պատգամավորուհիների միջև և ի՞նչպես ե հաշվի առնվում այդ աշխատանքը:

3. Խնչպիսի նվաճումներ կան այս բնագավառում:

4. Խնչպես ե բջիջը հասարակական աշխատանքի լծում չքավոր և բատրակ գեղջկուհիներին:

5. Դնձում ե արդյոք շրջանային կին-կազմակերպիչը գեղջկուհիների կենցաղային և տնտեսական ազատագրման հարցերը խորհրդային, հասարակական և կոոպերատիվ կազմակերպութիւնների առաջ:

6. Խնչպիսի աշխատանք ե կատարվում խորհուրդների, կոոպերացիայի և այլ հասարակական կազմակերպութիւնների ընտրովի անդամ հանդիսացող գեղջկուհիների հետ:

7. Ներգրավվում են արդյոք չքավոր գեղջկուհիները չքավորական խմբերում և չքավորական կոնֆերանսներում:

8. Խնչպիսի աշխատանք ե կատարվում չքավոր գեղջկուհիների մեջ:

9. Ի՞նչպես կարող ես պատգամավորութիւն ոգնել ըջջի աշխատանքներին:

10. Պատգամավորական ժողովը վորպես հասարակական միավոր և մասսաների կազմակերպիչ զանազան կամպանիաների ժամանակ կուսակցութեանն ոգնելու գործում:

Կարելի չե նուէնպես կողիկտիվ ընթերցանություններ կազմակերպել և կարդալ Լենինի «Մոսկվայի բանվորութիւնների կոնֆերանսում արտասանած ճառը» և «Բանվորութիւնների միջազգային որը», հոգովածը:

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԸ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Որինակելի գեկուցումներ գործնական
հարցերի շուրջ

1. Կոլտնտեսութեան նախագահի գեկուցումը կանանց աշխատանքի կիրառման, նրա վարձատրման ձևերի և կոլտնտեսութեան աշխատավորութիւնների վորակավորումը բարձրացնելու համար ձեռք առնված միջոցների մասին:

2. Կուլտուր-կենցաղային հանձնախմբի գեկուցումն այն մասին, թե ինչպես ե կազմակերպված կենցաղը կոլտնտեսութեան մեջ:

Առաջին գեկուցման սխեման

1. Ի՞նչպիսի տիպի յե տվյալ կոլտնտեսութեանը:

2. Թե ընտանիքի անդամ և թե ինքնուրուէն տնտեսութեան վարող գեղջկուհիներից քանի հոգի չե ներգրավված կոլտնտեսութեան մեջ:

3. Գլուղատնտեսութեան վեր ճշուղերն են զարգացած ավյալ կոլտնտեսութեան մեջ:

4. Խնչպես և ոգտադործվում կանանց աշխատանքը:

5. Խնչպես և վարձատրվում կանանց աշխատանքը:

6. Խնչ և արված աշխատավորուհիների վերակազմումը բարձրացնելու և կոլտնտեսութեան մեջ կանանց աշխատանքն ավելացնելու գծով:

7. Կան արդյոք այնպիսի հասարակական հիմնարկներ, վորոնք ազատում են աշխատավորուհուն անաշխատ աշխատանքի ծանրաբեռնումից (մսուրներ, մանկական հրապարակներ, ճաշարան, լվացարան): Կոոպերացիան այս գործին ո՞՞ժանդակում է, թե վոչ:

8. Կոլտնտեսութեան կից գոյութուն ունե՞ն արդյոք արտադրական խորհրդակցություններ, և ի՞նչպես են ներդրաված այնտեղ աշխատավորուհիները:

9. Կոլտնտեսութեան անդամ պատգամավորուհիների անելիքները կանանց աշխատանքի պայմանների պաշտպանութեան և բարելավման գործում:

Յերկրորդ զեկուցման սխեման

1. Կոլտնտեսութեան մեջ կան արդյոք հասարակական ճաշարան, ի՞նչ վորակի և զնի յեն ճաշերը:

2. Խնչ միջոցներ են ձեռք առնված ճաշերի վորակը լավացնելու և զներն հոժանացնելու համար:

3. Խնչ պայմաններով է սնվում աշխատավորի ընտանիքը:

4. Կան արդյոք մանկական հիմնարկներ (մսուրներ, մանկական հրապարակներ, մանկապարտեզներ),

և կարգավորված և արդյոք մանկական սննդի գործը:

5. Խնչպես և դրված աշխատանքը մանկական հիմնարկներում:

6. Խնչ չափով են ներգրավված աշխատավորուհիները մանկական հիմնարկներին ոժանդակելու աշխատանքներում:

7. Խնչ չափով են ներգրավված յերեխաները դպրոցում:

8. Խնչպես և դրված դասագրքեր, կոշիկ և հագուստ մատակարարելու գործը:

9. Խնչպես և կազմակերպված շորերը լվանալու, կարելու և կարկատելու գործը (հասարակայնորեն, թե՛ անհատորեն):

10. Խնչքան ժամանակ են խլում կուտնտեսու-թյան աշտատավորուհուց տնային տնտեսության գործերը:

11. Խնչ միջոցների յե ձեռնարկված կուտնտեսու-թյան կենցաղի հետագա հասարակայնացման և նրա աշխատավորուհիներին տնային գործերից ազատագրելու ուղղությամբ:

12. Պատգամավորական ժողովի դերը կուտնտեսու-թյան աշխատավորուհիների կենցաղի բարելավման գործում:

Ֆեդրափակման գրույց. «Կանանց աշխատանքն ու կենցաղը կոլեկտիվում մեջ»

1. Գեղջկուհու դերը գյուղատնտեսության մեջ: Գերազանցապես կանանց աշխատանք պահանջող ճյուղերի զարգացումը կուտնտեսության մեջ: Կանանց

աշխատանքի դերն ու նշանակութիւնը (ցածր վորակավորումը, տնային տնտեսական բեռնավորութիւնը և այլն): Կանանց աշխատանքի վորակավորման բարձրացման և կոլտնտեսութեան կանանց աշխատանք պահանջող ճշգրիտ դարգացման անհրաժեշտութիւնը: (Թռչնաբուծութիւն, բանջարաբուծութիւն և այլն):

2. Աշխատանքի վարձատրման ձևերն ու մեթոդները տարբեր կոլտնտեսութիւնների մեջ: Գործարքային սիստեմը և նրա առավելութիւնները: Աշխատանքի վարձատրման ձևերը վորպես աշխատանքի արտադրողական բարձրացման խթան:

Կոլտնտեսութեան աշխատավորուհիների համար առաջադի աշխատանքի անհամարաչափ վարձատրութիւնը և նրա դեմ պայքարելու անհրաժեշտութիւնը:

3. Կոլտնտեսութեան առավելութիւններն անհատական տնտեսութեան համեմատութեամբ գեղջկուհիների կենցաղի բարելավման տեսակետից: Կենցաղի հասարակայնացման կախումը կոլտնտեսութեան տիպից (ինչքան բարձր և կոլտնտեսութեան արտադրական տիպը, այնքան հեշտ և կենցաղի կազմակերպումն աշխտեղ):

Կոլտնտեսութեան աշխատավորուհիների ինքնագործունեութեան նշանակութիւնը կենցաղի բարելավման խնդրում: Կոլտնտեսութեան մեջ կոլտուր-կենցաղային արշավ անցկացնելու փորձը:

4. Հնի մնացորդները կոլտնտեսութեան կենցաղում (կրօնական նախապաշարումներ, սանիտարա-առողջապահական ունակութիւնների անբավարար քա-

ակը, ալկոհոլիզմ, խուլիգանութիւն, բամբասանք)։ Այս յերեւելիքների դեմ պայքարելու միջոցները։ Կոլեկտիվ կերպով կազմակերպված կենցաղի նշանակութիւնը կոլտնտեսութեան նորմալ կյանքի համար։

Պատգամավորական ժողովի դերն ու խնդիրները կենցաղում իրենց դոկութիւնը պահպանած հնի մացորդների դեմ կռիւն ու կոլտնտեսութեան աշխատավորուհիների կենցաղի ու աշխատանքի պայմանները բարելավելու դործում։

ՊԱՅԲԱՐ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՒՆՏՐԱՅԻ ՀԱՄԱՐ

ՌԻՏԵԱԿԵԼԻ ԳԵԿՈՒԼՏՈՒՄՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽԱՐԿԵՐԻ

ԾՈՒՐԶ

1. «Կորչի անգրագիտութիւնը» ընկերութեան բջիլի գեկուցումը։

2. Կոլտնտեսութեան վարչութեան գեկուցումն իրենց մոտ կատարած կուլտաշխատանքների մասին։

3. Պատի լրագրի խմբագրի գեկուցումը։

4. Անաստվածների միութեան գեկուցումը։

Առաջին գեկուցումն սխեման

1. Ի՞նչ պատկեր ունի տվյալ կոլտնտեսութեան յերկսեռ աշխատավորների գրագիտութիւնը։

2. Ի՞նչպէս ե կազմակերպում «Կորչի անգրագիտութիւնը» ընկերութեան բջիլն անգրագիտութեան վերացման գործը։

3. Ի՞նչ ե արել այդ բջիլը կոլտնտեսութեան աշխատավորների և շրջակա գյուղացիութեան անգրագիտութիւնը վերացնելու համար։

4. Նա կապված է արդյոք խրճիթ-ընթերցարանի հետ:

Կոլոնեսեսսուքյան վարչության գեկուցման սխեման

1. Կա՞ արդյոք վարչության մեջ մի այնպիսի ընկեր, վորը հատկապես նշանակված լինի կոլանտես-սության աշխատավորների կուլտուրական աշխատանքին ու հանգիստը կազմակերպելու համար:

2. Ի՞նչ է արել վարչութունը գրագիտության և կուլտուրայի համար: Տնտեսության անդամները ծանոթացել են տվյալ սպյոնի ագրոմինիմումին:

3. Կոլանտեսությունը կուլտուրական ազդեցություն գործում է շրջակա գյուղացիության վրա (կուլտուրական ժամանցների, թերթերի ու ժուրնալների ընթերցանության և գիտական նպատակներ հետապնդող եքսկուրսիաների կազմակերպում):

4. Տնտեսության աշխատավորներն ուղարկվա՞ծ են արդյոք սովորելու (գլխոցներում, կուրսերում և այլ վայրերում) և քանի՞ հոգի:

5. Ի՞նչ է նշել վարչութունն իր աշխատավորների կուլտուրական դաստիարակության բնագավառում հետազայում կատարելիք աշխատանքների մեջ:

Յեզրափակման գրույց. «Պայտու գրագիտության յեվ կուլտուրայի համար»

1. Գյուղական բնակչության կուլտուրական հետամնացությունը վորպես ամենալուրջ մի խոչընդոտ գյուղի սոցիալիստական վերակազմության ճանապարհին: Գյուղի և մանավանդ գեղջկուհիների գրագիտության ցած մակարդակը: Գյուղական բնակչության

կուլտուրական խոշոր հետամնացության պատճառները: Գյուղական բնակչության գրագիտության բարձրացումը հիմնական զենքն է հանուն տնտեսության նոր ձևերի և գյուղական նոր կենցաղի՝ դասակարգային թշնամու դեմ կռվելու համար:

2. Ընդհանուր ուսում մուծելու պլանը: Ջրավորների և բատրակների յերեխաներին նախնական տիպի դպրոցները ներգրավելու առաջիկա խնդիրները և մինչև ավարտելը դպրոցում պահելու ուղղությամբ ձեռք առնվելիք միջոցները: Ջրավորների և բատրակների յերեխաներին յոթնամյա, իննամյա և գյուղյերիտ դպրոցները, տեխնիկումները և բարձրագույն ուսումնական հիմնարկները ներգրավելու խնդիրները:

3. Գյուղական ազգաբնակչության և հատկապես գեղջկուհիների անգրագիտության վերացումը: Ակտիվիստ-գեղջկուհիներին, պատգամավորուհիներին և բատրակուհիներին առաջին հերթին ուսման ուղարկելը վորպես հիմնական խնդիր: Ուսուցման նպատակով բատրակ, չքավոր և միջակ գեղջկուհիներին զանազան ուսումնական հիմնարկներ ուղարկելը: Գեղջկուհու արտադրական գրագիտության բարձրացման անհրաժեշտությունը: Կուտնտեսուհու վորակավորման բարձրացման կուրսերը:

4. Թերթ, գիրք, կինո և ռադիո մեծ ու փոքրին ալյանդակող խմիչքի փոխարեն: Գեղջկուհիներին բանագյուղթղթակիցների շարժման մեջ ներգրավելու անհրաժեշտությունը: Պատի լրագրի աշխատանքը կուտնտեսության մեջ:

5. Մասսաների ինքնագործունեյության և կազմակերպման նշանակությունը կուլտուր ալի և նոր

կենցաղի համար մղվող պայքարում: Կուլա-կրթական հանձնաժողովի անելիքները: Կուլտուր-կենցաղային արշավի դերը հասարակական ուշադրութունը կուլա-կենցաղային հարցերի վրա հրավիրելու գործում: Խոչ դեր պետք է խաղա պատգամավորուհին հանուն կուլտուրական գյուղի մղվող պայքարում:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Պատգամավորական ժողովներում հակակրոնական գրույցներ անցկացնելու եռուք

Հանձնարարվում է մշակել յերկու թիմա, առաջին՝ ինչո՞ւ դիտությունը և կրոնը անհամառոտելի չեն, և յերկրորդ՝ ինչո՞ւ պետք է կռվել կրոնի դեմ:

Առաջին զրույցը պետք է անցկացնել ա՛յն դեպքում միայն, յերբ կճարվի բավականաչափ պատրաստության տեղ գեկուցող:

Տվյալ զրույցների նպատակն է՝ շահագրգռել կանանց մասսաները կրոնի քննադատությամբ, խախտել նրանց հավատքը և հրավիրել նրանց ուշադրութունը հակակրոնական ուսուցման վրա:

Հակակրոնական հետազա դաստիարակություն կարող են ստանալ պատգամավորուհիները հատուկ բնագիտական և այլ բնույթի դասախոսություններով, ակումբում, խմբակներում և թանգարանում, ինչպես նաև համապատասխան գրականության ընթերցանությամբ, վորի վրա պատգամավորուհիների ուշադրությունը պիտի հրավիրի ղեկավարը զրույցի ժամանակ:

Առաջին զրույցի համար ղեկավար պետք է հրա-

վիրել անաստվածների միութնունից, գյուղում կարելի չե հրավիրել նաև գյուղական ինտելիգենցիայից— գյուղատնտեսներից, տեխնիկներից, ուսուցիչներից, բժիշկներից:

Յերկրորդ զրույցը կարող ե անցկացնել ինքը՝ պատգամավորական ժողովի ղեկավարը:

Ցանկալի չե, վոր զեկուցողը նախապես ներկա լինի պատգամավորական ժողովի պարապմունքներից մեկի ժամանակ և ծանոթանա ունկնդիրների հետ: Յեթե պիտի զրույցներ անցկացնեն տարբեր մարդիկ, ապա ցանկալի չե, վոր յերկուսն ել ներկա լինեն թե մեկ և թե մյուս պարապմունքի ժամանակ: Իսկ պատգամավորական ժողովի ղեկավարի ներկայութունը յերկու պարապմունքների համար ել պարտադիր ե:

Գյուղում հակակրոնական զրույցները հանձնարարվում ե անցկացնել կոլլեկտիվ կամ խորհրդային տնտեսության մեջ (յեթե այդպիսիք կան մոտերքում), փորձակաչանում, ագրո-հողամասում և այլն, զրույցների լուսաբանության համար ակնառու նյութեր ոգտագործելու նպատակով:

Հանձնարարվում ե կիրառել ակնառու պիտույքներ (վայրենիների կրոնի ծագման, մարդու ուղեղի գործունեյության, մարդուն սպասավորող տեխնիկայի, քիմիայի և ելեկտրականության դերի լուսաբանության վերաբերյալ դիապոզիտիվներ և պլակատներ). դա կթեթեացնի զեկուցողի աշխատանքը:

Զրույցները պետք ե տանել հանգիստ ու գործնական տոնով, առանց ծաղրանքի ու կոպիտ արտահայտությունների, վորպիսիք կարող են վիրավորել հավատացյալների գգացումները:

Զրույցների ժամանակ պետք է խոսել ամենապարզ լեզվով և աշխատել զննողական, վորարդ ու պատասխանի համար ժամանակ մնա:

Առաջին թեմայի աստվածահավատության հարցն անցնելիս՝ չպետք է շատ մանրամասն կանգ առնել: Պահանջներ են կարճ կերպով պատմել միայն, վոր աստված ստեղծագործության, հրաշքների և այլ կրոնական խնդիրների ուսմունքը քրիստոնեյությունը փոխանցում է առհի աշխատանքի կոչված «հեթանոսներից»։ յերրորդության, աստվածահավատության, աստվածամոր անարատ զուգության ուսմունքը նույնպես հեթանոսական ծառայում ունի: Պետք է ընդգծել, վոր քրիստոնեյությունը, մահմեդականությունը, բուդդայականությունը, իսլամականությունը և այլ կրոններ միևնույն ընդհանուր շղթայի տարբեր ողակներն են, և վոր ամեն մի կրոն հետադիմական է:

Կոնկրետ որինակներով ցույց տալ, թե ինչպիսի շխանության տեր դարձած պրոլետարիատն սկզբից եթ ըստանիլով յեկեղեցին պետությունից՝ գիտության և տեխնիկայի ոժանդակությամբ հիմք է դնում ի նոր կյանքի: Այսպես, որինակ, տրակտորը դուրս բերելով գութանը՝ հեշտացնում է գյուղացու աշխատանքը և նրան անկախ դարձնում «աստված ոգնությունից»: Խորհրդային բժշկականության զարգացումը անգործ է թողնում զանազան «բուժիչ» սրբերին անխմատ դարձնում «աստված առողջություն պարկ» մաղթանքը:

Պետք է ցույց տալ ունենդիրներին, վոր մարդու կենդանիների ամեն տեսակ հիվանդությունների ամանակ առաջին հերթին պետք է կանչել բժշկին

կամ անասնաբուժին և վոչ թե աղոթքով ու աղերսանքով դիմել «սրբերին», վորովհետև ժամանակին հասած ոգնությունը միայն կարող է անժամանակ մահ վանից փրկել մարդուն և անասուններին, և վոչ թե աղոթքը (առաջին զրույցի 5-րդ կետը)։

Պետք է ցույց տալ, վոր գլուղատնտեսական փաստուհներ և յերաշտի դեմ կռվելու, բերքատվությունը բարձրացնելու և այլ ձեռնարկումների խնդրում գլուղատնտեսի խորհուրդն ավելի անհրաժեշտ ու ավելի ոգտակար է գլուղացու համար, քան աղոթքն ու պաղատանքը։

Ամբողջ զրույցի յեզրակացությունն այն պետք է լինի, վոր վոչ մի աստված գոյություն չունի, վոր նրան հնարել է մարդ-վայրենին իր զարգացման ցած աստիճանի վրա, իսկ հետագա բոլոր ժամանակների ու ժողովուրդների կուլտուրան, հիմնված լինելով մարդու միջոցով մարդուն շահագործելու սկզբունքի վրա, բուրժուական կուլտուրան, մինչև այսօր աջակցել և շարունակում է աջակցել աստուծո իդեայի ամրացմանը հանուն կապիտալի շահերի։ Աստծուն և սրբերին հավատալը փնասակար է։ Նա արգելք է հանդիսանում նոր կյանքի և նոր, պրոլետարական կուլտուրայի կառուցման գործին։

Գիտության և տեխնիկայի ոժանդակությամբ աշխատավորները հիմք են դնում մի նոր, սոցիալիստական սկզբունքների մարմնացում հոնդիսացող կյանքի։

Յերկրորդ թեման պետք է դնել ինչքան կարելի յե կոնկրետ և սերտ կերպով կապել սոցիալիստական ամբողջ շինարարության հետ, միաժամանակ ընդգծե-

լով, վոր հնգամյա պլանի իրագործումը նեցուկ է հանդիսանում աշխատավորական լայն մասսաներին շինարարության մեջ ներգրավելու գործին արգելք հանդիսացող կրոնի դեմ անողոք պայքար ձգելու անհրաժեշտութիւնը:

Կրօնը սոցիալիստական շինարարության, հետեւաբար նաև աշխատավոր մասսաների և մանավանդ կանանց դրության բարելավման թշնամին է:

Մատնանշել, վոր կրօնական կազմակերպութիւնների գործունեության ուժեղացումն արգասիք է մեր տնտեսութեան սոցիալիստական տարրերի աճման և կապիտալիստական տարրերի վտարման հողի վրա բռնկած դասակարգային պայքարի սրման. (այստեղ լավ կլինի վերցնել տեղական փաստեր, որինակ՝ հոգևորականների վերաբերմունքը ինքնահարկման և հացամթերումների հանդեպ):

Մատնանշել լեկեղեցական խորհրդի սոցիալական կազմը:

Պիտք է ուշադրութիւն դարձնել աղանդավորական կազմակերպութիւնների կողմից աշխատավոր գյուղացիութեան, առանձնապես կանանց մեջ կատարվող աշխատանքների վրա:

Անհրաժեշտ է միջիջ ավելի մանրամասն կերպով կանգ առնել այն խնդրի վրա, թե ինչի համար կանայք ավելի բարեպաշտ են, քան տղամարդիկ: Այդ նպատակով պետք է լուսաբանել կանանց վիճակը՝ կապելով դա տնտեսական կացութեան հետ, շոշափել կանանց վերաբերյալ բուրժուական որենսդրութեան խնդիրները, կնոջ ստեղծագործութեան ու պատվիրանազանցութեան առասպելը և կանանց ստրկական դրութեան որինականացումը կրօնում:

Յեզրակացութիւնն. կրօնի դեմ պայքարելը աշխատավոր կանանց, իբրեւ հասարակութեան ամենից ավելի ստրկացած մասի, ամենից ավելի հերթական ու կարևոր խնդիրն է հանդիսանում:

Կրօնի դեմ մղվող պայքարը մենք կուտուրական հեղափոխութեան մոմենտներից մեկն ենք համարում: Կրօնը գիտակից աշխատավորի համար մասնակի խնդիր է: Կրօնական ազդեցութիւնից արդեն իսկ ազատագրված յուրաքանչյուր պատգամավորունհի պետք է այդ ուղղութեամբ ոժանդակի մյուսներին, պետք է լինի ակտիվ անաստված:

I ԹԵՄԱ

Խնդր՝ գիտութիւնը յեմ կրօնը անհամաօրինակ յեմ

1. Աստվածահավատութեան ծագումը: Վայրենիների մտապատկերները շրջակա միջավայրի և բնութեան յերևութների մասին: Մեռած նախահայրերի աստվածացումը և բնութեան ուժերի յերկրպագութիւնը: Զոհաբերութիւնները: Հրաջների հավատքը:

5. Քրիստոնեական ուսմունքն աշխարհի մասին: Քրիստոնյաներն իրենց կրօնական ուսմունքը փոխ են առել նախորդ, այսպես կոչված «հեթանոսական» կրօններից (սուրբ յերրորդութիւն, անարատ հղութեան առասպելը, մեռնող և հարութիւն առնող աստուծո դիցաբանութիւնը):

3. Կրօնն ի պաշտպանութիւն շահագործողների և հարստահարողների շահերի: Ճնշվածները հնազանդութեան մեջ են պահվում անվտ աստուծո անվան, հանդերձյալ կլանքի սարսափի և յերկրային բարիքների առատ խոստումների միջոցով:

4. Կրօնի պայքարը գիտութեան և գիտական

գործիչների դեմ: Յեկեղեցու վերահսկողութիւնը զպրոցի վրա:

5. Գիտութիւնը աշխատանքային գործունեութեան մեջ կիրառելիս մարդկային կոլլեկտիվն իշխանութիւնն է ձեռք բերում բնութեան վրա: Խնչպես ե ոժանդակում գիտութիւնը բերքի առատացմանը, ինչ ե ասում գիտութիւնը տնտեսականներին և հավեղեններին խնամելու մասին: Գիտութիւնն ու կրօնը մարդու առողջութեան և հիվանդութիւնների մասին: Խնչպիսի միտաներ ե տալիս զանազան սրբերին հավատալը: Կրօնը միազնումն է աշխատավորների գիտակցութիւնը և թուլացնում ե նրանց կամքը: Նոր կյանքի համար վարած պայքարում: Նոր հասարակակարգ կառուցելու համար պայքարելն ասել ե՝ պայքարել կրօնի դեմ, բայց գիտութեան համար:

II ԹԵՄԱ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՒ ԿՈՎԵԼ ԿՐԹԻ ԳԵՄ

1. Կրօնը վորպիս աշխատավորների և մանավանդ կանանց ստրկացման գործիք:

Խնչ դեր ե խաղացել յեկեղեցին նախքան հեղափոխութիւնը վորպես կապիտալի հավատարիմ սպասավոր և հեղափոխութիւնից հետո վորպես խորհրդապետ իշխանութեան դեմ կռիւն գործիք: Դասակարգային պայքարի սրումը քաղաքում և գյուղում ծնունդ ե տալիս ամեն գուշի յեկեղեցականների և աղանդավորների առանձին ակտիվութեան:

2. Հնգամյա պլանը նշանակում ե սոցիալիզմի աճում, կապիտալիստական տարրերի հետագա վտարում և աշխատավորական մասսաների, վորոնց թիւում նաև բանվորահիներ և գեղջկուհիների, լայն ներ-

գրավումը սոցիալիզմի կառուցման աշխատանքներում: Կրոնը թուլացնում է աշխատավորների կամքը, արգելք դառնում կանանց լայն մասսաները շինարարության մեջ ներգրավելու գործին և «յերկնային գրախտի» մտահոգություններ պատճառելով՝ կտրում յերկրավոր գործերից: Յեկեղեցին ակնհայտ ֆեասարարության ասպարիզում (լրտեսութուն, առարկութուններ թոն որերին աշխատելու դեմ և այլն):

3. Յեկեղեցականների և աղանդավորների աշխատանքի մեթոդները կիսապիտակից մասսաների վրա իշխանություն ձեռք բերելու խնդրում և կրոնական կազմակերպությունների մեջ ներգրավելու ճանապարհով կանանց իրենց ազդեցությունը համակելու ձգտումները:

4. Նոր, կուլտուրական և ուժեղ կամքի տեր անձնավորությունն է միայն, վոր կարող է դառնալ սոցիալիստական հասարակության ակտիվ մասնակից: Հոգևորականությունը ձգտում է հնազանդության մեջ պահել կանանց և ոգտագործել ընտանիքի, հասարակության և տնտեսության վրա կրոնական-բուրժուական ազդեցություն տարածելու նկատառումներով:

5. Մեր շինարարության հնգամյա պլանի կատարման նեցուկներից մեկն է դառնում կրոնի դեմ անխնա պայքար մղելու անհրաժեշտությունը: Կինը, վորպես անցյալի ժառանգությունն ու կրոնի ազդեցությունն ամենից ավելի սուր կերպով զգացող անձնավորություն, պետք է դառնա ակտիվ մարտիկ կրոնի դեմ մղվող պայքարում: Կրոնի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է.—կանանց լայն մասնակցությունը տնտեսական շինարարության և հասարակական կյանքի գործունեության մեջ, քաղաքական և կուլտուրական գրագիտության բարձրացումը և կրո-

նի դասակարգային եյության ու հոգևորականության հակահեղափոխական գործունեյության մերկացումը։ Անաստովածների միություններն այս պայքարի շտաբն են հանդիսանում։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գեղջկուհիների յեվ կոլխոզուհիների պատժողովների ծրագրի համար

1. ՀԱՅԵՐԵՆ

1. Ա. Բ. Ռիկով—Յերկրի տնտեսական դրությունը.
հրատ. Պետհրատի, 1929 թ.
2. Ն. Յեգորով—Գյուղատնտեսության ինդուստրիա-
ցումը. հրատ. Պետհրատի, 1928 թ.
3. Հ. Մկրտչյան—Գյուղը սոցիալիզմի ճանապարհին.
հրատ. Պետհրատի, 1929 թ.
4. Ա. Խանջյան—Հայաստանի կոմկուսի աճման խըն-
դիրները. հրատ. Պետհրատի, 1929 թ.
5. Մ. Կույբիշևա — Գեղջկուհին ու խորհուրդը.
հրատ. Պետհրատի
6. Վ. Լինովարև — Կոոպերացիայի արուրենը.
հրատ. Պետհրատի, 1927 թ.
7. Հակակրոնական գյուղացիական ձեռնարկ.
հրատ. Պետհրատի, 1928 թ.

ՊԵՏԳՈՄՈՎՈՐԱԿԱՆ ԺԱՂՈՎՆԵՐԻՆ ԿԻՑ ՏՆՍՏՆԱԳՈՐԾՆԵՐԻ,
ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՆՐ ԱԹԵՍՏՈՎՈՐԱԴԻՅՆԵՐԻ
ՍԵԿՐԵՏՈՒ ԺՐԱԳԻՐԸ

ԱՌԱՋԻՆ ՋՐՈՒՅՑ

Տնայնագործական արդյունաբերության նշա-
նակությունը Խորհրդային յերկրի տնտեսության մեջ։
Մանր տնայնագործական արդյունաբերությունը

ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ այն նշանակությունն ունի, վոր նա լրացուցիչ դեր ե խաղում խոշոր պետական արդյունաբերության նկատմամբ և վաստակի աղբյուր հանդիսանում բանվորական ուժի նշանակալից մասի համար, մանավանդ գյուղում (համեմատել պետական արդյունաբերության հետ և բերել տվյալներ ըստ ֆիզիկական անձերի թվի և ըստ արտադրանքի):

Տնայնագործական արդյունաբերության կապը գյուղատնտեսության հետ:

Ազգային ռայոնների տնայնագործական արդյունաբերությունը, կանանց արհեստագործությունը:

Տնայնագործական արդյունաբերության զարգացման հնգամյա պլանի հիմնական թվերը:

Տնայնագործի իրավական դրությունը և հարկային արտոնությունները:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Տնայնա-արհեստագործական կոոպերացիան վորպես բաժան-բաժան մանր արդյունաբերության հասարակայնացման միջոց:

Արհեստագործական կոոպերացիան վորպես մանր տնայնագործական արդյունաբերությունը չերկրի ընդհանուր ժողովրդական տնտեսության մեջ ներգրավելու և նրան դեպի սոցիալիստական հունն ուղղելու միջոց:

Տնայնագործուհիների կոոպերացման հասարակական նշանակությունը. արհեստագործական կոոպերացիան նրանց տնտեսական և կենցաղային ազատագրման միջոցն ե:

Կոոպերացված տնայնագործների թիվը և նրանց կազմակերպման ձևերը: Ստորին խավերի և միության փոխարաբերությունները:

Արհեստագործական կոոպերատիվի կազմակերպությունը:

Արհեստագործական կոոպերատիվի վարչական և վերահսկիչ մարմինները, վարչությունը, վերահսկիչ հանձնաժողովները, խորհուրդները:

Ջրավորության կոոպերացումը վորպես հիմնական քաղաքական խնդիր:

Ջրավորական ֆոնդերի կազմակերպումն ու ոգտագործումը: Վարկային և տնտեսական աշխատանքներին չքավորության շահերի տեսակետից ուղղություն տալու անհրաժեշտությունը: Դիֆֆերենցիալ փալը:

Ընտանիքի յերկրորդ անդամի կոոպերացումը:

Կոոպերացիան վորպես մասնավոր կապիտալի դեմ կռիվն ու միջոց:

Պայքար կեղծ կոոպերատիվների դեմ:

ՅԵՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Արհեստագործական կոոպերացիայի տնտեսական աշխատանքն ու պլանավորումը:

Հում նյութի և կիսաֆաբրիկատների մատակարարման կարգը դեֆիցիտային հումուլթ գործածող և հետագործությունների մեջ: Հումուլթի և կիսաֆաբրիկատների ընդհանուր պակասը: Հումուլթը խնայողաբար գործածելու անհրաժեշտությունը: Զանազան տեսակի մաշվածքների և նետվող փշրանքների ոգտագործումն ու արտադրությունը:

Տեղական հում նյութեր գործածող արհեստագործական ճյուղերի զարգացման և շինարարական նյութերի արտադրության անհրաժեշտությունը: Տեղական շուկայում պահանջվող ապրանքների վաճառահանումը:

Տնայնագործների և տնայնագործուհիների վաստակը: Այն բարձրացնելու միջոցները: Մշակվող ապրանքների ծախքերի ավելադրումների և գների իջեց-

ման միջոցները՝ Տնայնագործական արտադրությունների վորակի լավացումը:

Խորհրդային վողջ տնտեսության և նրա յուրաքանչյուր առանձին կազմակերպության պլանինշանակությունը:

Տարեկան և հնգամյա պլանի կազմումը:

ԶՈՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Արդյունաբերական կազմակերպությունների սեփական միջոցները:

Սորեսային արամադրությունների (собесни-чество-յի) դեմ կովելու անհրաժեշտությունները:

Սեփական միջոցների կուտակումը վորպես արհեստագործական կոոպերացիայի, հատկապես նրա տեխնիկական վերասարքման դարգացման անհրաժեշտ պայման:

15-րդ համագումարի և կուսակցության Կենտկոմի սեպտեմբերի 3-ի դիրեկտիվներն արհեստագործական կոոպերացիայի սեփական միջոցների կուտակման մասին: Փայական կապիտալները վորպես սեփական միջոցների կուտակման հիմունք, փայավճարները, նրանց չափը, դիֆֆերենցիալ փայավճարը, ավանդները:

Հումուլթային կապիտալներ, մեքենայացում: Պահեստի կապիտալները և յերկարատև վարկավորման ֆոնդերը: Վաստակի բաշխումը: Սեփական միջոցների կուտակման հնգամյա պլանի հիմնական թվերը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Տնայնա-արհեստագործական տեխնիկայի բարձրացումը:

Ցածր տեխնիկան և բանվորի արտադրողականությունը տնայնագործական արդյունաբերության մեջ: Համեմատություն պետական արդյունաբերության

հետ, ցածր տեխնիկայի ազդեցութիւնը ապրտնքի վորակի և գնի վրա: Յերկարատե բանվորական ուր և տնայնագործի ցածր աշխատավարձը: Արհեստագործական կոոպերացիայի միջոցով տնայնագործական արդյունաբերութեան տեխնիկան բարձրացնելու անհրաժեշտութիւնը:

Արհեստագործական կոոպերացիայի ընդհանուր արհեստանոցների և այնտեղ աշխատող բանվորների քանակը:

Անգործ մնացած ձեռնարկութիւնների և ազատված սարքավորման հանձնումը տնայնա-արհեստագործական կոոպերացիային, պետական արդյունաբերութեան միջոցով: Արհեստագործական կոոպերացիայի կապիտալ-շինարարութիւնը:

Արհեստագործական կոոպերացիայի տեխնիկայի բարձրացման սոսպարիզում կատարած նվաճումների որինակներ:

Կատարելագործված ճախարակը վորպես տեխնիկայի զարգացման որինակ տանը աշխատող տնայնագործուհիների համար:

ՎԵՑԵՐՈՐԻ ԶՐՈՒՅՑ

Տնայնագործների վորակավորման բարձրացումը:

Կուլտուր-կենցաղային աշխատանքը և տնայնագործների ու տնայնագործուհիների ակտիվի դաստիարակութիւնը:

Տնայնագործական արդյունաբերութեան և արհեստագործական կոոպերացիայի աշխատակիցների վորակավորման ցածր մակարդակը: Վորակավորյալ բանվորական ուժի պատրաստութեան անհրաժեշտութիւնը: Աշակերտութիւնը:

Պրոֆեսիոնիկական կրթութիւնը—ուսումնասիր-
ցողական արհեստանոցներ, հրահանգիչներ, պրոֆ-
եսիոնիկական դպրոցներ, տնայնագործական տեխնի-
կումներ:

Ուսումնական խմբակների ընդունելութեան կար-
գը, սովորողների գործուղողուն ու թռչակավորումը
պետական ու կոոպերատիվ հիմունքներով: Հեռակա
ուսումնումը:

Տնայնագործների կուլտաշխատանքի կադմա-
կերպութիւնն ու խնդիրները: Կոոպերատիվ աւտա-
դրական պրոպագանդան: Հասարակական քաղաքական
դաստիարակութիւնը:

Կադրերի նախապատրաստութիւնը. Աշխատան-
քը կին ակտիվի հետ—խորհրդակցութիւններ, կոնֆե-
րանսներ, համագումարներ, պատգամավորական ժո-
ղովներ: Տնայնագործուհիների առաջնաշուկը վար-
չութիւնների և վերահսկիչ հանձնաժողովների մեջ:

Արհեստագործական կոոպերացիայի աշխատանքը
տնայնագործուհիների կենցաղի սպասարկման և բար-
վոքման գործում—մսուրների, մանկական հրապա-
րակների, ճաշարանների և հանրակացարանների կադ-
մակերպութիւնը: Արհեստագործական կոոպերացիայի,
փոխգնութեան գանձարկղները և նրանց աշխատանքը
տնայնագործուհիների սպասարկման ուղղութիւնը
(հանգստյան տներ, հիվանդանոցներ, սոցիալական ա-
պահովութիւն, հիվանդութիւնների, հաշմանդամու-
թեան, հղիութեան և այլ տիպի աշխատանք-
ների դիմաց):



ԳԱՍ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0039248